

V 12.00.05
U-25

ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ ՄԿՐՏՉԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՇԱՌ-ԱՏՈՒԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան - 2012

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ

САРГСЯН ГРИГОР МКРТЫЧЕВИЧ

ПРОБЛЕМЫ ОСВОБОЖДЕНИЯ ОТ УГОЛОВНОЙ
ОТВЕТСТВЕННОСТИ ВЗЯТКОДАТЕЛЯ

А В Т О Р Е Ф Е Р А Т

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.05. – «Уголовное право и криминология; уголовно-исполнительное
право»

Ереван - 2012

Ատենախոսության բեման հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Շ. Ծաղիկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, Լ. Ջ. Թադևոսյան

իրավաբանական գիտությունների թեկնածու, Մ. Մ. Մարկոսյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. նոյեմբերի 23-ին, ժամը 12-ին Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի փ. 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՌՀ գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առարվել է 2012 թ. հոկտեմբերի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *Ս. Մաֆարյան* Գ. Հ. Սաֆարյան

Тема диссертации утверждена в Российско-Армянском (Славянском) университете.

Научный руководитель: доктор юридических наук, профессор С.Ш. Цагикян

Официальные оппоненты: доктор юридических наук, Л. З. Тадевосян кандидат юридических наук, М.М.Маркосян


Ведущая организация: Институт Философии, социологии и права НАН РА

Защита состоится 23-го ноября 2012 года, в 12⁰⁰ часов на заседании специализированного совета ВАК 063 по юриспруденции при Российско-Армянском (Славянском) университете (0051, г. Ереван, ул. Овсепя Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале библиотеки Российско-Армянского (Славянского) университета.

Автореферат разослан 22-го октября 2012 г.

Ученый секретарь специализированного совета доктор юридических наук, профессор *Մ. Սաֆարյան* Գ.Դ. Սաֆարյան



2

4966-2012


12.00.05
W-25

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտության բեմայի արդիականությունն ուղիղ համեմատական է Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) կոռուպցիայի տարածվածության չափերին: Այն հանցավոր երևույթից վերածվել է սոցիալականի, շատերի համար՝ կենսակերպի և ինքնահաստատման միջոցի: Այսօր այն սպառնում է ազգային անվտանգությանը, խաբխուրում պետական կառավարման համակարգը, քայքայում համամարդկային ընդունված արժեհամակարգը:

Կաշառակերությունը հանդիսանում է կոռուպցիայի առավել տարածված վտանգավոր և լատենտային դրսևորումներից մեկը: Կաշառակերության՝ որպես հասարակությունում սուլիալ-քաղաքական, տնտեսական և իրավական բացասական երևույթի դեմ քրեաիրավական պայքարի հիմնախնդիրների հետազոտությունը ներկա պատմական զարգացման շրջանում խիստ կարևոր է և հրատապ: Այն մասի և առաջ պայմանավորված է հասարակության քրեականացման ընդհանուր աճի և պետական իշխանության ոլորտում կոռուպցիայի խորը արմատավորմամբ:

Կաշառակերության վերաբերյալ վիճակագրությունն էլ ավելի մտահոգիչ է: Այսպես, ՀՀ դատախազության ինտերնետային կայք-էջի¹ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կաշառակերության շարժընթացն ունի հետևյալ պատկերը.



Մակայն կաշառակերության ներկայացված վիճակը չի համապատասխանում իրականում առկա վիճակին, քանի որ առաջինը գրանցված հանցագործությունների պատկերն է: Համապատասխան մասնագետների կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտությունները վկայում են այն մասին, որ կաշառակերության լատենտայնությունն անցնում է 95%-ը: Վերջին շրջանում, կարծում ենք, այս ցուցանիշն ավելի է աճել: Ուստի կարելի է հետևություն անել, որ կաշառակերության դեմ պայքարում կիրառվող միջոցառումները նվազ արդյունավետ են, և բացահայտված հանցագործությունների առկա քանակն ընդամենը դրանց չնչին մասն են կազմում: Խնդրահարույց հարցերի առանցքն են կազմում կաշառատուի քրեական պատասխանատվության հարցերը և նրա վարքագծի իրավական գնահատականը իրավակիրառ պրակտիկայում, որոնք արտահայտվում են հանցագործության մասին «կամավոր» հայտնելու արհեստական դրսևորումներով, որպիսի փաստը կաշառակերության դեմ պայքարի միջոցները մեխանիկորեն շեղում են միայն կաշառակերների ուղղությամբ:

¹ <http://genproc.am/am/181/>

Կոռուպցիայի դրսևորումներն օրեցօր աճում են, իսկ դրա դեմ պայքարը ցանկալի արդյունք չի տալիս: Ըստ «Transparency international» միջազգային անկախ կազմակերպության հետազոտությունների՝ 2011 թվականի դրությամբ 183 պետությունների շարքում Հայաստանը զբաղեցնում է 129-րդ տեղը, այսինքն՝ աշխարհի առավել կոռուպցիայով երկրներից է, իսկ առավելագույնը 10 բարեմաստ միավորով չափվող կոռուպցիայի ընկալման ինդեքսը Հայաստանի համար 2.6 է: Այս տվյալները նույնպես խոսում վկայություն են մեր երկրում կաշառակերության և ընդհանրապես կոռուպցիայի վիճակի:

Ատենախոսության բեմայի արդիականությունը պայմանավորված է նաև կաշառակերության՝ հանրոթեն վտանգավորության բարձր աստիճանով: Կաշառակերությունը պետությանը և հասարակությանը պատճառում է էական վնաս, այն կարող է խրաճել այլ հանցագործությունների կատարմանը:

Գատախրավական, տնտեսական, սոցիալ-քաղաքական և գաղափարական փոփոխությունների փուլերում անհրաժեշտ է հասարակության բոլոր ուժերի ներգրավմամբ հասնել պետական իշխանության մարմինների գործունեության կատարելագործմանը, քանի որ դրանից է էականորեն կախված մարդու իրավունքների իրացումը: Դա հատկապես կարևորություն է ստանում պետության և հասարակության ժողովրդավարացման ընթացքում՝ իրավական պետություն կառուցելու ճանապարհին:

Պետական ապարատի բնականոն գործունեության ապահովման միջոցներից է քրեաիրավական կարգավորումը: Այս համատեքստում անհրաժեշտություն է առաջանում կատարելագործելու կաշառակերության դեմ պայքարի կառուցակարգերը՝ քրեաիրավական և կանխարգելիչ միջոցների համակարգը:

Չնայած ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ քր.օր.) գործում է 2003 թվականից, արդեն իսկ նոր հայեցակարգային հիմքով օրենսգիրք կազմելու անհրաժեշտություն է առաջացել, որտեղ տեղ կզտեն կաշառակերության դեմ պայքարի հիմնախնդիրների վերաբերյալ թե՛ քրեական իրավունքի տեսության մեջ, թե՛ իրավակիրառ պրակտիկայում արդեն հավանության արժանացած օրինակելի ձեռքբերումները:

Ինչ վերաբերում է կաշառակերության քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրներին, ապա առաջին հայացքից լիարժեք պարզաբանված թվացող հարցի բովանդակության մեջ խորամուխ լինելու դեպքում առաջանում են բազմաթիվ խնդիրներ, որոնք շողկապվում են կաշառակերության և հարակից հանցակազմերի հասկացությունները տարբերակելու, խրախուսական նորմեր կիրառելու համար քրեաիրավական ճիշտ լուծումներ առաջարկելու և արդյունավետ պայքարի միջոցներ ընտրելու հետ: Այդ խնդիրներին զուգարվում են ՀՀ օրենսդրության միջնդրային կոլիզիաները, որոնք էապես խոչընդոտում են կաշառակերության և ընդհանրապես կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը:

Այս ամենը պահանջում է անհետաձգելի լուծումներ ինչպես քրեական իրավունքի գիտության բնագավառում, այնպես էլ օրենսդրության մեջ: Քրեաիրավական, ինչպես նաև իրավունքի այլ ճյուղերի նորմերի և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործումը քույլ կտա հասնել կաշառակերության և այլ կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Թեմայի վերաբերյալ առանձին հիմնահարցեր ատենախոսությունների շրջանակներում ուսումնասիրվել են բազմաթիվ իրավաբան-գիտականների կողմից՝ Ա. Ապրիսյանով, Յու. Աֆինոզենով, Բ. Վոլժենկին, Լ. Գաուլսման, Գ. Գորիկի, Ս. Շառիկին, Ա. Գոլովա, Ե. Յակովենկո, Բ. Չորովոնիսով, Ա. Կլիցիցի, Վ. Կիրիչենկո, Ա. Կիրպիչնիկով, Ն. Կորժանսկի, Ն. Կուչերյավի, Ն. Լուկաչենկո, Վ. Լունեն, Յու. Լյապունով, Ս. Մակարով, Գ. Միշին, Պ. Յանի, Ա. Սվետլով, Ս. Վ. Բակլանով, Ա. Ն. Լարկով, Օ. Է. Սոկոլսկի, Բ. Վ. Կորոբեյնիկով, Ա. Շեստակ, Վ. Ա. Կոմիսարով և այլք:

Կաշառակերության դեմ պայքարի, ինչպես նաև դրա որոշ դրսևորումների վերաբերյալ հետազոտություններ կատարվել են շատերի կողմից, սակայն դրանց գերակշիռ մասը կատարվել է այլ ազգի գիտնականների կողմից: Հայ իրականության մեջ այս ընդգրկում և խիստ արդիական բեմայի վերաբերյալ ատենախոսություն չի գրվել, և այս աշխատանքը միտում ունի լրացնելու այլ բացը:

Կաշառակերության դեմ պայքարի խնդիրների դժվարությունները պարարտ հող են ստեղծել այս ոլորտում բազմաթիվ աշխատությունների հեղինակման: Այդուհանդերձ, դեռևս չկա միասնական մոտեցում կաշառակերության բովանդակության վերաբերյալ:

Վերջին տարիներին ՀՀ օրենսդրություն ներմուծվեց միջազգային իրավական նորմերի մի ամբողջ համակարգ, որը որոշակիորեն բուլացրեց ռուսական իրավունքի և օրենսդրության ազդեցությունը:

Կաշառակերության քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրները կաշառակերության դեմ պայքարի առանցք են կազմում: Սրա վրա են խարսխվում իրավապահների ձեռնարկված միջոցառումները, ուստի այս ոլորտում հանգամանակից հետազոտություններ կատարելն առանցքային նշանակություն կունենա խրախուսական նորմի արդյունավետ կիրառության ուղիների վերհանման, նորմը պայմանավորող հասարակական հարաբերությունների իրական ազդեցության բացահայտման, խնդրահարույց հարցերի վերլուծության և համակարգային լուծումների առաջադրման հարցերում: Առկա խնդիրների լուծմանը միտված նոր գաղափարների հիմքում ընկած են միջազգային իրավական փաստաթղթերը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական հետազոտության նպատակն է կաշառակերության քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրների համալիր վերլուծությունը, դրա հիման վրա ՀՀ քրեական օրենսդրության կատարելագործմանն ուղղված հայեցակարգային հիմքերի մշակումը, ինչպես նաև ընդհանուր առմամբ կաշառակերության հակազդման քրեաիրավական և այլ միջոցների արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Այդ ընդհանուր նպատակը պայմանավորել է ատենախոսական հետազոտությունում հետևյալ խնդիրների ձևավորումը և լուծումը.

- կաշառակերություն հասկացության գիտական սահմանումների համատեքստում ոչ իրավաչափ առավելություններ տալ-ստանալու հետ կապված կոռուպցիոն արարքների հստակեցումը և տարբերակումը,
- կաշառակերության վերաբերյալ ներպետական և արտերկրյա օրենսդրության պատմական և իրավահամեմատական վերլուծությունը, դրանց թերությունների և առավելությունների վերհանումը, ՀՀ-ում փոխառման համար օրինակելի լուծումների առանձնացումը,
- կաշառակերության պատասխանատվության վերաբերյալ քրեաիրավական նորմերի մեկնաբանման տեսական և գործնական հիմնախնդիրների հետազոտությունը,
- կաշառակերության քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրների ուսումնասիրությունը, արդի և վիճելի հիմնահարցերի առանձնացումը, լուսաբանումն ու համապատասխան առաջարկությունների մշակումը,
- ՀՀ օրենսդրությունում համապատասխան միջազգային-իրավական նորմերի իմպլեմենտացիայի միտումների և ուղղությունների վերհանումը,
- կաշառակերության կանխարգելման հիմնախնդիրների վերհանումն ու կանխարգելիչ միջոցների կատարելագործման ուղիների առաջարկումը,
- կաշառակերության կանխարգելման արտերկրյա փորձի լուսաբանումն ու փոխառման համար օրինակելի լուծումների առանձնացումը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսական հետազոտության օբյեկտ են կաշառակերության քրեական պատասխանատվության վերաբերյալ քրեաիրավական նորմերի իրագործման հետ կապված իրավական հարաբերությունները:

Հետազոտության առարկան են կազմում կաշառակերության քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ, ինչպես նաև առհասարակ կաշառակերության համար քրեական պատասխանատվությունը կարգավորող ներպետական և արտերկրյա օրենսդրությունը, ուսումնասիրվող խնդիրներին վերաբերող տեսական մոտեցումներն ու գիտական մշակումները, կաշառակերության վերաբերյալ դատական պրակտիկան:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմել են համակարգային մոտեցումն ու դիալեկտիկական մեթոդը: Աշխատանքում

օգտագործվել են գիտական հատուկ մեթոդներ, այն է՝ իրավահամեմատական, պատմավերլուծական, համակարգակառուցվածքային, սոցիոլոգիական, կրիմինոլոգիական, վիճակագրական, տրամաբանական, վերլուծական և այլն:

Հետազոտության տեսական հիմքն են կազմել արտերկրյա և հայրենական գիտնականների՝ իրավունքի ընդհանուր տեսության, քրեական իրավունքի և դատավարության, միջազգային իրավունքի, կրիմինոլոգիայի, պատմության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության բնագավառների աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ հիմքն են կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ունիվերսալ և ռեգիոնալ միջազգային կոնվենցիաները, արձանագրություններն ու այլ ակտերը, մասնավորապես՝ ՄԱԿ-ի 2000 թվականի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Կոնվենցիան, ՄԱԿ-ի 2003 թվականի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիան, Եվրոպայի Խորհրդի 1999 թվականի Կոռուպցիայի համար քրեական պատասխանատվության մասին Կոնվենցիան, ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ, Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) և ԱՊՀ մյուս պետությունների, Շվեդիայի, Հունգարիայի, Դանիայի, Շվեյցարիայի, Բուլղարիայի, Լեհաստանի, ԱՄՆ-ի, Չինաստանի, Ռուսաստանի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի քրեական օրենսգրքերը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, ՀՀ մաքսային օրենսգրքը, «Փրավական ակտերի մասին», «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքները և այլ օրենքներ, ՀՀ գերագույն և վճարելի դատարանների որոշումները, ինչպես նաև ՄԱԿ-ի և ՌԴ-ի գերագույն դատարանների պլենումների որոշումները, պատմական Հայաստանի, Յարական Ռուսաստանի և Խորհրդային ժամանակաշրջանի քրեական օրենսդրությունը, ինչպես նաև այլ իրավական ակտեր:

Հետազոտության փորձառնական (եմպիրիկ) հիմքն են կազմել.

- ՀՀ դատախազության պաշտոնական վիճակագրական տվյալները,
- ՀՀ տարբեր ատյանների դատարաններում 2007-2011թթ. ժամանակահատվածում քննված ավելի քան հիսուն քրեական գործերի ուսումնասիրման արդյունքները,
- ՀՀ Վճարելի դատարանի պրակտիկան,
- 2012 թվականին 89 անձանց շրջանում հատուկ մշակված հարցաթերթիկի օգնությամբ անցկացված հարցման արդյունքները:

Ատենախոսության գիտական նորույթն առաջին հերթին կայանում է նրանում, որ, ի տարբերություն նախկինում կատարված հետազոտությունների, համակողմանի, հայեցակարգային մակարդակով հետազոտվել են կաշառատուրի քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրները: Առաջին անգամ Հայաստանում, հաշվի առնելով միջազգային հանրություն ինտեգրվելու հանգամանքը, քննարկվող խնդրի քրեաիրավական ասպեկտների համակարգման փորձ է կատարվել:

Խնդրի համակողմանի և խորը հետազոտության արդյունքում առաջարկվում են կաշառատուրի քրեական պատասխանատվությունից ազատելու հետ կապված տեսական և պրակտիկ լուծումներ՝ արդի պայմաններում դրանց կենսագործման հնարավորությունների համատեքստում:

Առաջին անգամ փորձ է կատարվել գնահատելու միջազգային իրավական նորմերի փոխառման արդյունքում գործող օրենսդրության բացասական և դրական ասպեկտները, դրանք համեմատվել և վերլուծվել են մինչ այդ գոյություն ունեցող լուծումների համատեքստում: Ձևավորված եզրահանգումների հիման վրա կատարվել են քրեական օրենսդրության կատարելագործման ուղղված մի շարք առաջարկություններ:

Նորույթով են բնութագրվում նաև հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները, որոնք ներկայացված են պաշտպանության ներկայացվող դրույթների տեսքով.

1. ՀՀ քր.օր.-ի 312-րդ հոդվածում անբազմակից կաշառք տալու հասկացությունում՝ համապատասխան ոչ իրավաչափ առավելության «խոստանալը», «առաջարկելը» և «տրամադրելը» եզրույթների միակցումը հաջողված չի կարելի համարել, քանի որ միևնույն արարքի առումով հանցագործության ավարտման պահը փոփոխվում է, որը նորմի տարակարծության և սխալ կիրառման պատճառ կարող է դառնալ: Անհրաժեշտ է առաջին

երկու եզրույթները տարանջատել երրորդից և հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ բովանակությամբ.

«Պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեքի տեսքով կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը՝ իր կամ իր ներկայացրած անձանց օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքն օգտագործելով աշխարհի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպատակներով կամ ծառայության գծով հովանավորության կամ թողտվության համար, եթե կաշառքի խոստմանը կամ առաջարկին չի հաջորդել կաշառքի տրամադրում...»: Նույն մոտեցմամբ համապատասխան փոփոխություններ անհրաժեշտ է կատարել ոչ իրավաչափ առավելություն տալու-ստանալու հետ կապված մյուս հոդվածներում:

2. Ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանը կաշառակերության դեմ քրեաիրավական պայքարում ոչ լիարժեք է օգտագործում միջազգային փորձը, ուստի անհրաժեշտ է փոխառել միջազգային և արտերկրյա քրեական օրենսդրության դրական լուծումները, մասնավորապես՝ տարբերակված քրեական պատասխանատվություն սահմանել ոչ իրավաչափ առավելություն տրամադրելու համար՝ կախված կաշառք տալու սուբյեկտիվ կողմի դրսևորումից, այսինքն՝ տարանջատել «կաշառք-գումը» «կաշառք-շնորհակալությունից» և այն ստանալու համար սահմանել քրեական պատասխանատվություն առանձին հոդվածով:

«ՀՌԿՎԱԾ 311.4 Պաշտոնատար անձի կողմից նախապես չխոստացված ոչ իրավաչափ առավելություն ստանալը

Պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական լիազորությունների իրականացման հետ կապված նախապես չխոստացված նվեր կամ վարձատրության տեսքով այլ առավելություն ապօրինի ստանալը, որը կապված չէ ծառայության գծով իրավախախտում կատարելու հետ, պատժվում է...

Հանցագործություն չի համարվում պաշտոնատար անձի կողմից, առանց նախնական պայմանավորվածության, որպես նվեր կամ որևէ այլ առավելություն ապօրինի ստանալը իր լիազորությունների մեջ մտնող, արդեն կատարված գործողության (անգործության) համար, եթե ոչ իրավաչափ առավելության արժեքը չի գերազանցել նվագագույն աշխատավարձի հարյուրապատիկը»:

Այս դեպքում անձը պետք է ենթարկվի կարգապահական պատասխանատվության:

3. Կաշառակերության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակահարմար է սահմանել հիմքեր՝ խրախուսական նորմ կաշառակերին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին, ուստի և առաջարկվում է ոչ իրավաչափ առավելություն ստանալուն վերաբերող հոդվածներում նախատեսել խրախուսական նորմ՝ հետևյալ բովանակությամբ.

«Կաշառք ստացող անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցագործության կատարումից ոչ ուշ, քան 3 օր հետո կամավոր հայտնել է իրավապահներին կամ հանրությանը՝ զանգվածային լրատվամիջոցով, կաշառք ստանալու մասին կամ եթե կաշառքը ստացել է իր կամ իր մերձավորի իրավունքներին և օրինական շահերին վնաս պատճառելու սպառնալիքով, և, եթե կաշառքով պայմանավորված՝ անձի արարքն ինքնին այլ հանցակազմ չի պարունակում»:

4. Կաշառքի միջնորդության դիսպոզիցիայի ընկալումը և կիրառումը միանշանակ չեն և տարակարծության առիթ են տվել պրակտիկայում և հանգեցրել են միջնորդի ու հանցակցի նույնացման: Տարբերություններից և տարամեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկվել է ՀՀ քր. օր.-ի 313-րդ հոդվածը սահմանել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՌԿՎԱԾ 313. Կաշառքի միջնորդությունը.

1. Կաշառքի միջնորդությունը, այսինքն՝ կաշառակերի կամ կաշառատուրի հանձնարարությամբ անմիջականորեն կաշառքի փոխանցում կամ կաշառատուրի և/կամ

կաշառակերի միջև կաշառք տալու և կաշառք ստանալու շուրջ համաձայնության իրականացմանը կամ հասնելուն այլ կերպ նպաստելը...»

2. Նույն արարքը, որը կատարվել է ակնհայտ ապօրինի գործողություն կատարելու կամ չկատարելու համար կամ պաշտոնատար անձի կողմից...

3. Նույն արարքը, որը կատարվել է՝

ա. մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից,

բ. խոշոր չափերով, պատժվում է...

4. Նույն արարքը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով, պատժվում է...

5. Կաշառքի միջնորդություն առաջարկելը կամ խոստանալը պատժվում է...

6. Կաշառքի միջնորդը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցագործություն կատարելուց հետո ակտիվորեն աջակցել է հանցագործության բացակայումսնը կամ կանխմանը և ոչ ուշ, քան 3 օր հետո կամավոր հայտնել է իրավասյաի մարմնին անձամբ կամ հանրությանը՝ մասնույի միջոցով»:

5. Գործող քրեական օրենսգրքում կաշառքի առարկայի փաստացի յուրացման դեպքերը որպես խարդախություն որակելը արդարացված չէ: Այն խնդիրներ է առաջացնում հանցավոր ոտնձգությունից պաշտպանության ենթակա հասարակական հարաբերությունների դիտարկման տեսանկյունից այն առումով, որ, հակառակ քրեական օրենքի դիտարկման սկզբունքների, կաշառքի առարկան այս կերպ վերաձվում է քրեական օրենքով պաշտպանվող օբյեկտի: Հարցի լուծման նկատառումով առաջարկվել է քրեական օրենսգրքը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈՂՎԱԾ 313.1 Կաշառքի յուրացումը

1. Կաշառքի յուրացումը, այսինքն՝ անձի կողմից իրավասու պաշտոնատար անձին տրամադրելու նպատակով իրեն փտահաված կամ նույն պատրվակով կորզված կամ կարծեցյալ պաշտոնատար անձի կերպարով իրեն տրամադրված կաշառքի յուրացումը պատժվում է...

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

ա. խոշոր չափերով,

բ. մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, պատժվում է...

3. Նույն արարքը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով, պատժվում է...»:

Հարցի նման լուծման պարագայում ՀՀ քր.օր.-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը անհրաժեշտ է ճանաչել ուժը կորցրած:

6. Կաշառքի շորթման համար քրեական պատասխանատվություն սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն կաշառակերության ավանդական հասկացության մեջ սկզբունքորեն չի տեղավորվում, բովանդակային առումով իրենից այլ կոռուպցիոն հանցագործություն է ներկայացնում, ուստի այն պետք է հանել ՀՀ քր.օր.-ի 311-րդ հոդվածի լուծման տիրույթից և սահմանել առանձին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈՂՎԱԾ 311.3 Կաշառքի շորթումը

Կաշառքի շորթումը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից ոչ իրավաչափ առավելություն տրամադրելու պահանջը ծառայության գծով այնպիսի գործողություն կատարելու կամ չկատարելու սպառնալիքով, որը կարող է վնաս պատճառել անձի իրավունքներին և օրինական շահերին, կամ անձին դիտավորյալ առաջադրել այնպիսի պայմաններ, որի պարագայում նա ստիպված է ոչ իրավաչափ առավելություն տրամադրել իր իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտումը կանխելու նպատակով, պատժվում է...»:

Հարցի նման լուծման դեպքում 312-րդ հոդվածի 4-րդ մասից «եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ» բառերն անհրաժեշտ է հանել:

7. Պահանջը, ինչպես հայտնի է, ենթադրում է հրաման, վերջնագիր, կատեգորիկ հայտարարություն, սահայն քրեական իրավունքի տեսությունում և իրավակիրառ պրակտիկայում վաղուց եկել են այն եզրահանգման, որ շորթման էությունը ոչ թե ձև է, որում անվտիվաժ է սպառնալիքը, այլ՝ շորթողի կողմից շորթվողի կամքի նկատմամբ անօրինական

ազդեցության բովանդակությունը, ուստի «պահանջ» եզրույի հետ կապված՝ պաշտոնատար անձի գործողություններն անհրաժեշտ է տարանջատել երկու մասի: Առաջինը, երբ պահանջը վերաբերում է ոչ իրավաչափ առավելություն հայցելու և տրամադրելու առաջարկին, իսկ երկրորդը՝ այդպիսի սպառնալիք բովանդակող հարկադրանքի միջոցով տրամադրելուն, որն անմիջականորեն առնչվում է տրամադրողի անօրինական շահերին: Այն պետք է դիտել որպես կաշառք ստանալու որակյալ հատկանիշ և դիսպոզիցիան սահմանել հետևյալ բովանդակությամբ. «Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, որը կատարվել է հարկադրելու միջոցով, կաշառք տվողի կամ նրա համար հետքորդություն ներկայացնող անձի օգտին ակնհայտ անօրինական գործողություն կատարելու կամ չկատարելու համար...»

Հետագոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատությունում մեծագույն մակարդակով մշակվել է հայեցակարգային դրույթների մի համակարգ, որոնք ուղղված են կաշառակերության դեմ պայքարի քրեաիրավական համակարգի կատարելագործմանն առհասարակ և կաշառատուին քրեական պատասխանատվությունից ազատելու խրախուսական նորմի կատարելագործմանը՝ մասնավորապես:

Աշխատությունում պարունակվող հիմնական դրույթները, եզրահանգումներն ու առաջարկությունները որոշակիորեն կլրացնեն կաշառակերության դեմ պայքարի քրեաիրավական տեսությունը և կարող են օգտագործվել թեմային վերաբերող հարցերի հետագա գիտական և ուսումնամեթոդական ուսումնասիրությունների համար:

Հետագոտության գործնական նշանակությունը պայմանավորված է կաշառակերության համար պատասխանատվություն սահմանող քրեական օրենսդրության կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկությունների ներկայացմամբ:

Համապատասխան դրույթները, եզրահանգումներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել գիտահետազոտական աշխատանքներում, օրինատեղծ գործունեությունում, իրավաբանական ԲՈՒՀ-երի ուսումնական գործընթացներում՝ քրեական իրավունքի և կրիմինոլոգիայի համապատասխան բաժիններն ուսումնասիրելիս, ինչպես նաև իրավապահ կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացներում:

Քր.օր.-ի համապատասխան նորմերի միասնական մեկնաբանման և կիրառման հարցերի վերաբերյալ գործնական առաջարկություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել իրավակիրառ պրակտիկայում:

Հետագոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության թեման հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի կողմից, որտեղ անցկացվել է դրա բննարկումը և գրախոսությունը:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են գիտական հոդվածներում, գիտագործնական ձեռնարկներում և մեծագույնությունում և զեկուցվել են ավելի քան 10 միջազգային և ներպետական գիտաժողովներում, սեմինարներում և կլոր սեղանների ժամանակ 2009-2012 թվականների ժամանակահատվածում:

Հետագոտության արդյունքները փորձարկվել են «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի համապատասխան ուսումնական գործընթացների՝ դատախազների, քննիչների վերապատրաստման, ինչպես նաև դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման շրջանակներում 2009 թվականից առ այսօր: Հետագոտության առանձին դրույթներ օգտագործվում են ՀՀ դատական դպրոցի ուսումնական գործընթացներում:

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է թեմայի բովանդակությամբ և հետագոտության խնդիրներով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք միավորում են յոթ ենթագլուխներ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԱՄԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է քեմայի արդիականությունը, ներկայացվում են դրա մշակվածության աստիճանը, տեսական, մեթոդաբանական, նորմատիվ և փորձառական հիմքերը, ձևակերպվում են նպատակները և խնդիրները, որոշվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, շարադրվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, բովանդակվում է փորձարկման արդյունքները և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Կաշառակերության սոցիալ-իրավական բնութագիրը» վերաբերյալ գլուխը կազմված է երկու պարագրաֆներից:

Առաջին պարագրաֆում («Կաշառակերության հասկացությունը և բնորոշ առանձնահատկությունները») քննարկվում են կաշառակերության էության, պատճառների, հետևանքների հարցերը:

Հեղինակը հիմնավորում է, որ ներկա ժամանակաշրջանում կաշառակերությունը դարձել է գլոբալ խնդիր, որն էականորեն խախտում է հասարակության և անձի անվտանգությունը, ժողովրդավարության և պետական կառավարման սկզբունքները, հավասարությունն ու սոցիալական արդարությունը: Նրա կարծիքով, կաշառակերության հանրային բարձր վտանգավորությունն այն է, որ այդ երևույթը փաստացի համակարգայնացվել է կառավարման մարմիններում և «քայքայում է» պետական իշխանությունը՝ դարձնելով այն թույլ, կեղծ, ձևական: Խարխալելով իշխանության հանդեպ վստահությունը, նրա հեղինակությունը՝ կաշառակերությունը, ի վերջո, խոչընդոտում է հասարակական շահերի իրականացումը, անձի ազատությունը, վնասում է այլ երկրների հետ համագործակցությանը, սոցիալական և ներդրումային քաղաքականությանը և այլն: Կաշառակերությունը դառնում է այն երևույթը, որի չափերով է պայմանավորված հասարակության քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումը:

Ատենախոսի կարծիքով՝ կաշառակերության էությունը այն է, որ այն ձևախեղում է սոցիալական կապերը, խաթարում է հասարակությունում առկա իրերի ճիշտ, արդար դասավորությունը, որի արդյունքում իշխանությունը «ժանգոտում, փչանում է»: Կաշառակերությունը ենթադրում է իշխանության և նրա հնարավորությունների օգտագործումը ոչ թե հասարակության շահերի, այլ առանձին անձանց (նախ և առաջ՝ կոռուպցիայի) կամ խմբային շահերի համար:

Անդրադառնալով կաշառակերության տարեցտարի նկատվող աճին՝ ատենախոսը գտնում է, որ դրա հիմնական պատճառները մի քանիսն են՝ սոցիալ-քաղաքական (պետության բուկոթությունը, պետության և հասարակության կառուցվածքային ճգնաժամը), տնտեսական (տնտեսական բարեփոխումների իրականացման ընթացքում նյութական միջոցների անվերահսկելի վերաբաշխման սխալները), քարոյառոգեբանական (սոցիալական և քարոյական արժեհամակարգի փոփոխությունը, ընդհանուր մշակութային մակարդակի անկումը) և պաշտոնյաների եսասիրական վարքագիծը, նրանց հարստացման անհագ ձգտումը՝ իշխանական լիազորությունների և պաշտոնական դիրքի չարաշահման ճանապարհով և այլն:

Հեղինակը իր իրականացրած հետազոտության արդյունքների հիման ցույց է տալիս, որ հայ իրականության մեջ կոռուպցիան ընկալվում է որպես խիստ բացասական երևույթ, սակայն շատ ավելի տեսակորոշված վերացական: Ավելին, հարցվածները, որպես կանոն, անձնական կապերը օգտագործելը, հավելավճար տալը չեն դիտում որպես կոռուպցիոն տարրեր պարունակող գործողություններ, այլ կոռուպցիա են համարում բացառապես ինչ-որ մեկի կողմից կաշառք պահանջելը: Հարցման արդյունքների վերլուծությունը մաս ցույց է տվել, որ նույնիսկ երիտասարդությունը չի ցանկանում բարձրաձայնել խնդրի մասին և ներքուստ հաշտվել է դրա գոյության հետ, իսկ հարցվածների մեկ երրորդը բացասական են համարում կոռուպցիայի մասին համապատասխան մարմիններին հայտնելը: Նրանք մաս հույս չունեն, որ դա ինչ-որ բան կփոխի: Ասվածի հիման վրա հեղինակը եզրակացնում է, որ նախ՝ կոռուպցիան արմատական և համակարգային խնդիր է: Երկրորդ՝ կոռուպցիան

ասոցացվում է բարեկեցության հետ. այն համարվում է այլընտրանքային եկամտի աղբյուր: Երրորդ՝ կոռուպցիան սոցիալ-հոգեբանական առումով չի դիտվում որպես հանցագործություն, առավելագույնը՝ համարվում է զանցանք, իսկ իրավապահ մարմիններին դիմելն ուղղակի անընդունելի է հոգեբանական առումով: Չորրորդ՝ կոռուպցիան, որը նույնացվում է կաշառքի հետ, դիֆուզիոն կերպով աղապատացված է ազգաբնակչության /գոնե հետազոտվող խմբի/ կենցաղին, կյանքի ամենօրյա հոսքին: Իսկ եթե կաշառք վերցնողի արարքը նվազագույնը հոգեբանական առումով ընդունելի է կամ չի քննադատվում, հետևաբար պարզ է դառնում մաս, որ հոգեբանորեն ընդունելի է մաս կաշառք տալը, որը ևս չի դիտվում որպես հակահասարակական երևույթ: Այստեղից էլ հետևում է, որ առաջանում է փակ շրջա, երբ կաշառք առաջարկողն ու կաշառք վերցնողը գտնվում են փոխշահավետ «ժամագործակցության» դաշտում:

Անդրադառնալով բուն կաշառակերության հասկացության հարցի քննարկմանը՝ հեղինակը նշում է, որ կաշառակերությունը շահադիտական հանցագործությունների շարքին է դասվում, այս հանցագործության էությունը այն է, որ պաշտոնատար անձը իր ծառայողական վարքագծի (պահելակերպի) կամ զբաղեցրած պաշտոնի բերումով այլ անձանցից կամ կազմակերպությունից ստանում է անօրինական վարձատրություն: Կաշառակերությունը հավաքական հասկացություն է, այն ընդգրկում է պետական իշխանության դեմ ուղղված մի քանի ինքնուրույն հանցակազմեր՝ կաշառք ստանալը, կաշառք տալը և կաշառքի միջնորդությունը: Հեղինակը գտնում է, որ նշված ուղեգծությունները փոխկապակցված են, ձևավորում են այսպես կոչված «անհրաժեշտ հանցակցություն», քանի որ եթե չկա կաշառք տալու փաստը, չկան մաս կաշառք ստանալը և կաշառքի միջնորդությունը:

Ատենախոսը, վերլուծելով տեսական գրականության մեջ կաշառակերության հասկացության վերաբերյալ առկա երեք հիմնական մոտեցումները, եզրակացնում է, որ միշտ են այն հեղինակները, որոնք կաշառակերության մեջ մտնող հանցագործությունները դիտարկում են առանձին: Այսպես, հեղինակը նշում է, որ չնայած կաշառք տալու և կաշառք ստանալու միջև գոյություն ունի սերտ կապ, այնուամենայնիվ դրանք ինքնուրույն հանցագործություններ են, քանի որ միմյանց նկատմամբ ունեն հատուկ հարաբերակցություն հենց միայն դրանցում առկա նշաններով: Ըստ նրա՝ միայն հանցագործության սուբյեկտի տարբեր լինելը այնպիսի էական հանգամանք է, որը թույլ չի տալիս դրանք քննարկել որպես մեկ հանցագործություն: Բացի այդ, կաշառք տալու և ստանալու հանցագործություններն ունեն տարբեր օբյեկտիվ կողմեր, սուբյեկտի բնութագրեր, հետաքրքրություններ, գործողությունների շարժառիթներ, դրապատճառներ և նպատակներ: Համաձայնվելով այն մտեցման հետ, որ կաշառք տալը, ստանալը և միջնորդությունը տարբեր հանցագործություններ են, թեև պայմանավորված են մեկը մյուսով, հեղինակը իր մտեցումը հիմնավորում է՝ հիմք ընդունելով քրեական օրենսդրությունը: Հեղինակի կարծիքով, ինչպես գործող ՀՀ քր.օր.-ում, այնպես էլ արտասահմանյան երկրների քրեական օրենսգրքերում և միջազգային իրավական ակտերում ուղղակիորեն առանձնացվում են տարբեր հոդվածներ կաշառք տալու, ստանալու, որոշ դեպքերում մաս միջնորդության համար՝ դրանով իսկ ընդգծելով հիշյալ հանցակազմերի ինքնուրույնությունը:

Ատենախոսը կաշառակերության հասկացությունը բացահայտելու համար վերլուծում է մաս կաշառքի առարկայի հարցը և հանգում է այն եզրակացության, որ գործող ՀՀ քր.օր.-ում ամրագրված կաշառքի առարկան ամբողջական է և լրացման կարիք չունի:

«Կաշառակերության վերաբերյալ Հայաստանի օրենսդրության պատմական ակնարկ» վերստառյալ երկրորդ պարագրաֆում քննարկման առարկա է դարձվել Հայաստանի պետության և իրավունքի պատմության մեջ կաշառակերության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերի ծագման և զարգացման գեներալը:

Ատենախոսը նշում է, որ կաշառակերությունն ու դրան առնչվող հանցագործությունները տարածված են եղել հայ իրականության մեջ բոլոր պատմական փուլերում, և դա ստիպել է կանոնագրքի ու աշխարհիկ օրենքների, առանձնապես դատաստանագրքերի մեր հեղինակներին դրանցում համապատասխան իրավանորմեր

մտցնել: Նա փաստում է, որ այդ նորմերում նախատեսվող հիմնական հանցագործություններն էին կաշառակերությունը, զոշաքաղությունը, սինոնականությունը և կաշառավորությունը:

Հեղինակը, ուսումնասիրելով պատմագիտական տարբեր նյութեր և կանոնագրքեր, եզրակացնում է, որ հին Հայաստանում կաշառք տրվել է տարբեր նպատակների համար: Եղիշեի վկայությամբ, Վարդանանց պատերազմի նախօրեին պարսկասեր տարրերը կաշառք միջոց էին դարձրել քաղաքական նպատակների համեմելու համար: Հայաստանի նախալուսավորիչ Թադևոս առաքյալին ու սուրբ Սահակին, Մանուկունուն վերագրվող կանոններում, Նիկայի ժողովի, Վաղարշապատի եկեղեցական ժողովների, Շահապիվանի ժողովի, Անիի ու Հարթի եկեղեցական ժողովների և մյուս համարյա բոլոր ժողովների կողմից ընդունված կանոնադրություններում կարմիր թելի նման այն միտքն է անցնում, որ կաշառքը, զոշաքաղությունը, սինոնականությունը և այլ նման արարքները՝ որպես «բոլոր չարիքների արմատ հանդիսացող», «աստծու իրավունքը ծախող» արարքներ, որպես «Հուլյայի և կախարդ Սիմոնի պետի» արտահայտություններ, պետք է խտրորեն հետապնդվեն, և դրանք կատարողները պետք է անողորմաբար պատժվեն: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ կանոնադրությունները վերոհիշյալ արարքների սուբյեկտների նկատմամբ սահմանում էին թե՛ քրեադատական պատիժներ և թե՛ եկեղեցական-կանոնական պատիժներ: Սկզբունքն այն է եղել, որ հանցագործները պետք է պատժվեն միաժամանակ թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես: Երկարամյա տարած և ու տարաբովանդակ ապաշխարանքը, պաշտոնագրությունը, եկեղեցուց հեռացնելը, բանադրանքը, եկեղեցական նզովքը, ազվեսադրույնը այն հիմնական պատժամիջոցներն են եղել, որ մեր կանոնագրքի կանոնադրությունների ուժով կիրառվել են մեղավորների նկատմամբ:

Հեղինակը նշում է, որ կաշառքի և դրան առնչվող մյուս հանցագործությունների իրավաբանական բնույթն այն ու դրանց պատժելիության հարցը առավել լրիվությամբ է լուծված Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում, և վերլուծում է այդ իրավական հուշարձաններում ամրագրված նորմերը:

Հեղինակը եզրակացնում է՝ գործող օրենսդրության ձևավորման տեսանկյունից կաշառակերության վերաբերյալ օրենսդրական բուռն զարգացումները հիմնականում տեղի են ունեցել 20-րդ դարի սկզբներին և մասնավորապես խորհրդային ժամանակաշրջանում:

Ատենախոսը, վերլուծելով ցարական Ռուսաստանի և Խորհրդային Միության քրեական օրենսդրության զարգացումը, եզրակացնում է, որ կաշառակերության դեմ պայքարի վերաբերյալ Հայաստանի համար գերակա է եղել հատկապես Յարական Ռուսաստանի և Խորհրդային Միության քրեական օրենսդրության ազդեցությունը, որ ՀՀ քրեական օրենսդրությունը կատարելագործվել է հատկապես վերջինի հետ զուգահեռ: Հեղինակը գտնում է, որ Հայաստանի առաջին Հանրապետությունը, ինչպես նաև ամբողջ Խորհրդային պետությունը չեն բացառել նախկին իրավաբանական տեխնիկայի և սկզբունքորեն ճիշտ որոշումների կիրառման հնարավորությունը: Այդ իսկ պատճառով խորհրդային ժամանակաշրջանի քրեական օրենսդրությունն ու ժամանակակից օրենսդրությունը շատ առումներով ընդունել են Յարական Ռուսաստանի օրենսդրական դրույթները՝ միաժամանակ զարգացնելով դրանք: Դա մասնավորապես վերաբերում է կաշառակերության փաստացի բաժանմանը՝ կաշառք տալ և կաշառք ստանալ, կաշառակերություն պաշտոնական լիազորությունների շրջանակում և անօրինական գործողություններով արարքի կատարմանը («ձգողիմստվո») և «լիխտիմստվո»), կաշառակերության սուբյեկտի և առարկայի վերաբերյալ դրույթներին, հանցակիցների պատասխանատվությանը, կաշառքի շորքմանը: Բոլոր նշյալ հարցերը նմանատիպ ձևով, իհարկե որոշ վերապահումներով, լուծվել են նաև Յարական Ռուսաստանի քրեական օրենսդրությամբ:

Երկրորդ՝ «Կաշառատուին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը» գլուխը բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին («Հանցագործության մասին կամավոր հայտնելու հիմքով կաշառատուին քրեական պատասխանատվությունից ազատելու տեսական և գործնական հիմնախնդիրները») պարագրաֆում հիմնականում քննարկվում է հանցագործության մասին

կամավոր հայտնելու հիմքով կաշառատուին քրեական պատասխանատվությունից ազատելու տեսական և գործնական խնդիրները, ինչպես նաև՝ դրա քրեաբանական նշանակության հարցերը:

Ատենախոսը, ամփոփելով դատական պրակտիկան և վերլուծելով պաշտոնական վիճակագրության տվյալները, եզրակացնում է, որ կաշառակերության դեմ պայքարի առաջնությունը դրված է կաշառատուի համար ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածում նախատեսված՝ «կամավոր հայտնելու դեպքում պատասխանատվությունից ազատելու» վերաբերյալ խրախուսական նորմը: Բայց, միևնույն ժամանակ, ատենախոսը պնդում է, որ համապատասխան նորմի առկայությունը, ըստ էության, չի կանխորոշել պայքարի արդյունավետությունը:

Հեղինակը, անդրադառնալով կամավոր հայտնելու հիմքով կաշառք տվողին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցի քննարկմանը, վերլուծության առարկա է դարձնում նախ կաշառք տալ-ստանալու հանցակազմերը: Ատենախոսը մանրամասն անդրադառնում է կաշառք տալու ավարտի պահի հարցին: Նա, վերլուծելով 2006 թվականին քրեական օրենսգրքում կաշառք տալու և ստանալու հանցակազմերի դիսպոզիցիաների փոփոխությունները, եզրակացնում է, որ կաշառք տալ-ստանալու հանցակազմը ավարտի տեսակետից ավելի վաղ փուլ է տեղափոխվել, ինչը, հեղինակի կարծիքով, որոշակի խնդիրներ է առաջացնում: «Ժրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում ամրագրված կանոններին համապատասխան՝ «կաշառք տալ» հասկացությունը տառացի մեկնաբանելով՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ կաշառք տալը նույն է, ինչ «խտստանալը», «առաջարկելը» կամ «տրամադրելը»: Ավելին, նա գտնում է, որ հնարավոր չէ նույնացնել «խտստանալ» ու «առաջարկելը» «տրամադրելու» հետ: Եթե վերջինս «տալ» եզրույթի հոմանիշն է, ապա առաջին երկուսը չեն կարող տեղափոխվել կաշառք տալու իրական հասկացության մեջ, ինչպես նաև չի կարող նույն իմաստային գործողության դեպքում հանցագործության ավարտման պահը տարբեր փուլերում ավարտվել: Այս ամենի հիման վրա ատենախոսը եզրակացնում է, որ կաշառակերության վերաբերյալ հոդվածներում առկա են ներքինի հակասություններ, որոնց լուծումն արդի հրամայական է, քանի որ 2006 թվականից ի վեր դատարաններում քննված գործերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կաշառք խտստանալու և առաջարկելու, ինչպես նաև կաշառքի պահանջի, ստանալու խտստումի կամ առաջարկն ընդունելու մեղադրանքով որևէ գործ չի քննվել, չնայած այդպիսիք եղել են, սակայն, ըստ նրա, սխալ են որակվել: Հեղինակը գտնում է, որ ճիշտ կլինի, եթե քրեական օրենսգրքում կաշառք խտստանալը կամ առաջարկելը սահմանվի առանձին հոդվածով կամ կաշառք տալու հոդվածի առանձին մասով, որպեսզի գործնական կիրառության հարցում խնդիրներ չառաջանան, և առաջարկում է այդ հոդվածների սեփական խմբագրությունները:

Հիշյալ հարցի ենթատեքստում քննարկման առարկա դարձնելով կաշառքի պրովոկացիայի հարցը՝ հեղինակը ցույց է տալիս, որ այն ներկայումս առաջացնում է քաղաքակրթական խնդիրներ կաշառք տալ-ստանալու ավարտի պահի, այնուհետև կամավոր հայտնելու դեպքում պատասխանատվությունից ազատելու առումով: Բացի այդ ատենախոսը կարծում է, որ հանցագործության պրովոկացիա կազմող արարքներն այժմ քրեորեն պատժելի են և հանցագործության կատարման փաստական սխալի համատեքստում կարող են միանշանակ որակվել որպես հանցակցության փորձ, ուստի և եզրակացնում է, որ անհրաժեշտ է այդ հոդվածն ապաքրեականացնել: Մույն պարագրաֆի շրջանակներում հեղինակը քննարկման առարկա է դարձնում նաև կաշառք-չնորհակալության համար քրեական պատասխանատվության հարցը և եզրակացնում, որ քրեական քաղաքականությունը պետք է տարբերակվի պատժի և հանցագործության մասնակից անձանց արարքների քրեաիրավական գնահատականի տեսանկյունից: Ելնելով ասվածից՝ առաջարկվում է «Պաշտոնատար անձի կողմից նախապես խտստացված ոչ իրավաչափ առավելություն ստանալը» վերստույնում նոր հանցակազմ սահմանել՝ իր հատկանիշներով:

Հեղինակն այն կարծիքին է, որ գործող քրեական օրենսգրքում առկա են քաղաքակրթական խնդիրներ կաշառք տվողին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցում, և առաջարկում է օրենքում սահմանել իրավապահ մարմինների հասկացությունը և դրանց

ցանկը, ինչպես նաև ընդլայնել այն հասցեատերերի շրջանակը, որոնց կարելի է դիմել հանցագործության մասին կամավոր հայտնելու առիթով: Անդրադառնալով կամավոր հայտնելու էությանը՝ առեմախոսը նշում է, որ կամավոր է համարվում այն հայտարարությունը, որն արվել է առանց ստիպելու, հոժարակամ, կաշառք տվողի անձնական ցանկությամբ: Կամավորության մասին կարող է վկայել, մասնավորապես, հանցագործություն կատարած անձի կողմից այն իրադրության գիտակցումը, որ իրավապահ մարմիններին հայտնի չեն հանցանքի փաստը և այն կատարող անձինք: Նրա կարծիքով, երբ անձը հասկանում է, որ իրավապահ մարմինները տիրապետում են հանցագործության կատարման մասին տեղեկությանը և իրական միջոցներ են ձեռնարկում նրան կալանավորելու համար, կամավորության մասին խոսել արդեն չի կարելի: Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասում կատարված փոփոխությանը՝ կաշառք տալու վերաբերյալ հայտարարության ժամանակային սահմանափակման մասին, ապա հարկ է նշել, որ այն արդարացված է և՛ քրեաբանական և՛ դատավարական առումով: Դա քույլ կտա ավելի վաղ փուլում խափանել պաշտոնատար անձանց կոռուպցիոն գործունեությունը և էականորեն կոյուրինացնի կաշառք ստանալու փաստի ապացուցման հնարավորությունները:

Հեղինակը գտնում է, որ հայ իրականության մեջ որոշ դեպքերում պաշտոնատար անձը ստիպված է կաշառք վերցնել և ի օգուտ կաշառատուի որևէ գործողություն կատարել կամ չկատարել: Նրան ընտրության հնարավորություն չի տրվում: Ուստի առեմախոսը կարծում է, որ արդարացված կլինի կաշառակերի համար նույնպես սահմանել խրախուսական նորմ՝ հանցագործության մասին կամավոր հայտնելու առումով:

Երկրորդ գլխի երկրորդ («Կաշառքի շորքման դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրները») պարագրաֆում քննարկման առարկա են դարձել կաշառքի շորքման հասկացության և այդ հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցերը:

Հեղինակն այս հարցը քննարկում է՝ համեմատություն անցկացնելով Յարական Ռուսաստանի, ՌԴ և ՀՀ քրեական օրենսգրքերում ամրագրված հասկացությունների և ինստիտուտների միջև:

Առեմախոսը ցույց է տալիս, որ գործող քրեական օրենսգրքում կաշառքի շորքում հասկացությունը բացահայտված չլինելու պատճառով բազմաթիվ խնդիրներ են առաջանում այդ ինստիտուտի կիրառման առումով՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ կաշառքի շորքում հասկացությունը հաճախ փորձ է արվում բացահայտել սեփականության դեմ ուղղված հանցագործություն համարվող շորքման հատկանիշների միջոցով: Բացի այդ, հեղինակը ցույց է տալիս, որ շորքման դեպքում չի կարող լինել կաշառք տվող, քանի որ նա արդեն իսկ հանցագործության գոհ է: Ստացվում է, որ անձը դառնում է հանցագործությունից տուժող, սակայն չի ճանաչվում այդպիսին, այլ, ընդհակառակը, որպես հանցանք կատարած անձ՝ ուղղակի ազատվում է քրեական պատասխանատվությունից: Հեղինակը, չհամաձայնվելով իրերի այսպիսի դասավորության հետ, գտնում է, որ շորքման դեպքում անձը դառնում է տուժող, ուստի չի կարող քննարկվել նրան քրեական պատասխանատվության ենթարկելու կամ ազատելու հարցը: Թեև նա միաժամանակ գտնում է, որ անձը դառնում է հանցագործությունից տուժող այն դեպքում, երբ իր իրավունքների և օրինական շահերի խախտումը կամխելու համար է շորքման հիմքով կաշառք տալիս պաշտոնատար անձին. եթե նա տալիս է կաշառք իր համար բարենպաստ, սակայն անօրինական գործողություն կատարելու համար, ապա շորքում չի կարող լինել:

Առեմախոսը գտնում է, որ «պահանջ» եզրույթի առումով պաշտոնատար անձի գործողությունները անհրաժեշտ է տարանջատել երկու մասի: Առաջինը, երբ պահանջը կապված է ոչ իրավաչափ առավելություն տրամադրողի անօրինական շահերի հետ, այն պետք է դիտել որպես կաշառք ստանալու որակյալ հատկանիշ՝ դիսպոզիցիան սահմանելով հետևյալ բովանդակությամբ. «Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, որը կատարվել է հարկադրանքի միջոցով, կաշառք տվողի կամ նրա համար հետաքրքրություն ներկայացնող անձի օգտին սկսնայտ անօրինական գործողություն կատարելու կամ չկատարելու համար...»:

Կաշառքի շորքումը, իսկ ավելի նպատակահարմար է անվանել պաշտոնեական շորքումը, նույնպես պետք է դիտել որպես կոռուպցիոն ինքնուրույն հանցագործություն: Այն հանրության համար առավել բարձր վտանգավորություն ունի, ուստի և պատժողական քաղաքականության առումով առավել խիստ մոտեցում է պետք ձևավորել: Այս հանցագործության դեպքում ոչ իրավաչափ առավելություն տրամադրողը ոչ թե արհեստականորեն պետք է հանես գա որպես «կաշառատու»՝ հանցագործություն կատարող անձ, իսկ հետո քրեական օրենքի համապատասխան խրախուսական նորմի կիրառմամբ լուծվի նրան պատասխանատվությունից ազատելու հարցը, այլ ֆիզիկական անձ, որին հանցագործությամբ գույքային կամ ոչ գույքային վնաս է պատճառակել: Մրանով հենց ինքնուրույնության և իրավաչափորեն կլուծվի կաշառքի շորքման դեպքերով ոչ իրավաչափ առավելություն տրամադրողին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրը այն տեսանկյունից, որ այդպիսի հարց այլևս չի առաջանա, քանի որ կոնկրետ հանցագործության դեպքով տվյալ անձը հանդես կգա որպես տուժող:

Պաշտոնեական շորքման դեպքերով տուժող պետք է գիտակցի, որ համապատասխան պահանջ ներկայացնող պաշտոնատար անձին ոչ իրավաչափ առավելություն է տրամադրում՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով: Եթե անձը չի գիտակցել, որ իր նկատմամբ պաշտոնատար անձի կողմից շորքմամբ ոչ իրավաչափ առավելություն է պահանջվել, այլ խաբեության կամ մոլորության կամ չիմացության պատճառով վստահ է եղել, որ, այնուամենայնիվ, ոչ իրավաչափ առավելություն է տրամադրում՝ ի օգուտ իրեն կամ այլ անձի գործողություն կատարելու կամ չկատարելու դիմաց, հաստատ համոզված լինելով, որ այլապես օբյեկտիվորեն չէր կարող հավանել դրան, ապա, այս դեպքում, նրա արարքում առկա է կաշառք տալու փորձի հանցակազմը, քանի որ առաջին՝ անձը գիտակցաբար ուղեձգություն է կատարել պետական ծառայության հեղինակության դեմ, երկրորդ՝ նրա համար ոչ իրավաչափ առավելություն ստացողը կաշառակերության հասկացության առումով վերածվում է «կարծեցյալ» պաշտոնատար անձի: Սակայն կոնկրետ կատարած արարքի մասով ճշյալ պաշտոնատար անձը պետք է պատասխանատվություն կրի պաշտոնեական շորքման համար: Պաշտոնեական շորքումը պետք է ավարտված համարվի համապատասխան ոչ իրավաչափ առավելություն տրամադրելու պահանջի ներկայացման պահից, որը խախտում է անձի իրավունքները և օրինական շահերը կամ այնպիսի գործողությունների կատարումը, որոնք անձի առաջ դնում են այնպիսի անբարենպաստ պայմաններ, որի պարագայում նա ստիպված է կաշառք տալ՝ օրենքով պահպանվող իր շահերին հասցվող վնասակար հետևանքների առաջացումը կանխելու նպատակով: Այս հանգամանքների հիման վրա առեմախոսը գտնում է, որ պաշտոնեական շորքումը պետք է դուրս գա կաշառք կամ ապօրինի վարձատրություն ստանալու հանցակազմերի շրջանակից, և քրեական օրենքը լրացվի նոր հանցակազմով՝ «Պաշտոնեական շորքում» վերնագրմամբ, հետևյալ բովանդակությամբ. «Պաշտոնեական շորքումը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից ոչ իրավաչափ առավելություն տրամադրելու պահանջը ծառայության գծով այնպիսի գործողություն կատարելու կամ չկատարելու սպառնալիքով, որը կարող է վնաս պատճառել անձի իրավունքներին և օրինական շահերին կամ անձին դիտավորյալ առաջադրել այնպիսի պայմաններ, որի պարագայում նա ստիպված է ոչ իրավաչափ առավելություն տրամադրել իր իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտումը կանխելու նպատակով...»:

Հեղինակը գտնում է, որ հարցի այսպիսի լուծման դեպքում քր.օր.-ի 312-րդ հոդվածի 4-րդ մասից, «եթե տեղի է ունեցել կաշառքի շորքում, կամ» բառերը պետք է հանել:

Երկրորդ գլխի երրորդ («Կաշառք տալու համար հանցակիցներին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրները») պարագրաֆում քննարկման առարկա են դարձվել կաշառքի միջնորդության և օժանդակության հարցերը, ինչպես նաև՝ կարծեցյալ պաշտոնատար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերը:

Հեղինակը նշում է, որ հանցագործության կատարման մասին կաշառատուի կողմից կամավոր հայտնելը ինքնաբերաբար չի հանգեցնում կաշառք տալու մյուս հանցակիցների քրեական պատասխանատվությունից ազատման: Ըստ նրա՝ յուրաքանչյուր հանցակից ինքը պետք է ինքնուրույն կատարի համապատասխան հայտարարությունը, կամ այդպիսի

հայտարարությունը պետք է արվի հանցակիցներից թեկուզ մեկի կողմից, բայց բոլորի անունից կամ նրանց հետ համաձայնեցված: Այս պահանջների պահպանման դեպքում միայն հանցակիցները կաշառք տալու համար կազատվեն քրեական պատասխանատվությունից՝ ՀՀ քր.օր.-ի 312-րդ հոդվածի 4-րդ մասի խրախուսական նորմին համաձայն:

Ատենախոսը կարծում է, որ հանցակիցներին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնական խնդիրը հանցագործության հետ առնչվող հանցակցի և միջնորդի բովանդակային հարաբերակցությունն է, նշյալ հասկացությունների իրական մեկնաբանումը, սահմանակցումն ու առանձնահատկությունները: Անդրադառնալով այդ հարցերի քննարկմանը՝ հեղինակը գտնում է, որ տվյալ հարցի հետազոտումն առանցքային նշանակություն ունի, քանի որ հանցակցի և միջնորդի արարքների սխալ քրեաիրավական գնահատումն անուղղակի անդրադառնում է խրախուսական նորմի ճիշտ կիրառման վրա՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրը միջնորդի համար հանցագործության մասին հայտնելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու խրախուսական նորմ չի նախատեսել: Շարունակելով քննարկվող հարցի վերլուծությունը՝ ատենախոսը նշում է, որ ի տարբերություն կաշառք տվողի՝ անձի, որը շահագրգռված է կաշառք ստացողի համապատասխան գործողություններում, միջնորդը, կաշառքը փոխանցելով, չի հասնում պաշտոնատար անձի կողմից իր շահերին համապատասխանող այս կամ այն ծառայական գործողությունների կատարմանը կամ չկատարմանը: Միջնորդը ներկայացնում է ուրիշի շահերը, հանդես է գալիս ոչ իր անունից, և ոչ մի դեպքում չի կարող որպես նախաձեռնող լինել կաշառք տալու մեջ: Միևնույն ժամանակ, նրա կողմից փոխանցվող նյութական արժեքները, որպես կանոն, չեն կարող նրա սեփականությունը լինել: Հետևաբար, միջնորդի և կաշառատուի կամ կաշառակերի (ինձնավոր է նաև միաժամանակ երկուսի հետ էլ) փոխկապվածությունը, ըստ նրա, արտահայտվում է գործողությունների կատարումով, որը սեփական նախաձեռնության արդյունք չէ, այլ կաշառատուի կամ կաշառակերի հանձնարարությունը: Բացի այդ, հեղինակի կարծիքով՝ միջնորդության հասկացությունը պետք է տարածել ոչ միայն անմիջական կաշառքի առարկան փոխանցելու վրա, այլ նաև այն գործողության, երբ միջնորդը ցանկացած ձևով խթանում է կաշառք տալ-ստանալու համաձայնության ձևաքերմանը: Այդուհանդերձ, միջնորդը, փաստացի, միայն նպաստում է կաշառք տվողի և կաշառք ստացողի կողմից հանցագործությունների կատարմանը, այսինքն՝ հանդիսանում է նրանց կատարած հանցագործությունների մասնակից: Ի տարբերություն կաշառքի միջնորդի, կաշառք տալուն կամ ստանալուն օժանդակողը կարող է կապված լինել կամ միայն կաշառք տվողի, կամ միայն կաշառք ստացողի հետ: Անդրադառնալով ՀՀ օրենսդրությանը սահմանված այս հարցերին՝ ատենախոսը եզրակացնում է, որ դրա տառացի մեկնաբանությունը կարող է հանգեցնել միջնորդի և հանցակցի նույնացման:

Հեղինակը նաև կարծում է, որ ՀՀ օրենսդրությանը միջնորդի գործողությունները ֆիզիկական և ինտելեկտուալ միջնորդության առումով հստակ չեն և հնարավոր տարակածությունների առիթ կստեղծեն, քանի որ տառացի մեկնաբանությունը կարող է հանգեցնել միջնորդի և հանցակցի նույնացման: Կաշառքի միջնորդության համար նախատեսված որակյալ հատկանիշները Ռուսաստանի Դաշնության օրենսդրական լուծումների փոխաման համատեքստում դիտելը առավել քան տրամաբանական է, քանի որ դրանց հենքը կաշառք տալ-ստանալու որակյալ հատկանիշների արդարացի համադրումն է, նկատի ունենալով, որ ցանկացած արարքում միջնորդը կարող է մասնակցել: Փոխառման համար նպատակահարմար մյուս լուծումները վերաբերում են կաշառքի միջնորդության խտտումի կամ առաջարկի համար քրեական պատասխանատվություն նախատեսելու խրախուսական նորմի առկայության դրույթներին. «Անձը, ով հանդիսանում է կաշառակերության միջնորդ, ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցագործություն կատարելուց հետո ակտիվորեն աջակցել է հանցագործության քացահայտմանը կամ կանխմանը և կամավոր հայտնել է կաշառքի միջնորդության վերաբերյալ քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմնին»: Ատենախոսը, վերլուծելով Ռ.Չ. օրենսդրությունը, այն համադրելով ՀՀ օրենսդրության հետ, առաջարկում է

ՀՀ քր.օր.-ի 313-րդ հոդվածը ենթարկել որոշակի փոփոխությունների և ներկայացնում այդ հոդվածի հեղինակային տարբերակը:

Սույն պարագրաֆի շրջանակներում ատենախոսը անդրադառնում է նաև այն անձի գործողությունների իրավաբանական գնահատականի հարցի քննարկմանը, որը յուրացրել է կաշառք տվողի կողմից իրեն փոխանցված դրանք կամ այլ նյութական արժեքները: Հեղինակն իր անհամաձայնություն է արտահայտում հայ օրենսդրի այն մոտեցման հետ, որ մնան դեպքերը պետք է որակվեն որպես խարդախություն, և նշում է, որ արտաքննապես սեփականության դեմ ուղղված հանցագործության մտանկով «կարծեցյալ» պաշտոնատար անձի կամ «կարծեցյալ միջնորդի» գործողությունները «իրավական դեֆեկտ» են պարունակում, որի էությունը այն է, որ ոչ քրեական օրենքը, ոչ դատական պրակտիկան չեն կարող պաշտպանել այն հարաբերությունները, որոնք ակնհայտ անօրինական շահ են հետապնդում: Բանն այն է, որ, ըստ նրա, ՀՀ քրեական օրենքի տրամաբանությամբ՝ խարժածին պետք է միաժամանակ և տուժող համարել (խարդախություն), և հանցագործ (կաշառք տալու փորձ), որը անբույլատրելի է: Բացի դրանից, ասվածը այլ խնդիրների է հանգեցնում, օրինակ՝ կաշառքի առարկայի բռնագանձման առումով: Ատենախոսը գտնում է, որ քննարկվող հարցի կապակցությամբ օրինակելի է մինչևիդափոխական Ռուսաստանի օրենսդրությունը, որը հաշվի էր առնում «կարծեցյալ» պաշտոնատար անձի կամ «կարծեցյալ միջնորդի» գործողությունների առանձնահատկությունները: Ցարական Ռուսաստանի օրենսդրական կարգավորումները հիշյալ հարցի լուծման երեք տարբերակ էին նախատեսում. առաջին դեպքում՝ իրեն վստահված կաշառքի յուրացում, երկրորդ դեպքում՝ նկերի յուրացումը կորզումը միջոցով, և երրորդ դեպքում՝ կաշառքի ստացումը այլ ծառայողի անվան տակ: Վերլուծելով դրանք՝ ատենախոսը եզրակացնում է, որ Ցարական Ռուսաստանի օրենսդիրը հաշվի է առել ոչ միայն քննարկվող հանցագործությունների հատկանիշների առանձնահատկությունները, այլ նաև հերքականությամբ անրագրել է իրավաբանական կառուցակարգեր, որոնք բացահայտում են մնան գործունեության պատժելիությունը: Վերոնշյալի հիման վրա հեղինակը նշում է, որ գործող քրեական օրենսդիրը քննարկվող հարցի առումով չի արտահայտում իրական իրավահարաբերությունների շրջանակը, քանի որ, ըստ նրա, «կարծեցյալ» պաշտոնատար անձի և միջնորդի արարքները, վերջին հաշվով, վնասում են պետական ծառայության և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայության շահերին: Այդ իսկ պատճառով, ըստ ատենախոսի, ՀՀ քր.օր.-ում անհրաժեշտ է լրացնել «Կաշառքի առարկայի յուրացումը» վերտառությամբ առանձին հոդված, որը կսահմանի քրեական պատասխանատվություն կաշառքի յուրացման համար, իսկ ՀՀ քր.օր.-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, որը պատասխանատվություն է սահմանում կաշառք տալու նպատակով խարդախության համար, ուժը կորցրած ճանաչել:

Երրորդ գլուխը՝ «Կաշառակերության կանխարգելման հիմնախնդիրները», բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին («Կաշառակերության կանխարգելման կատարելագործման հիմնախնդիրները միջազգային-իրավական չափորոշիչների ներդրման (իմպլեմենտացիայի) համատեքստում») պարագրաֆում քննարկվում են կաշառակերության դեմ պայքարին միկրված մի քանի հիմնարար միջազգային իրավական ակտերի քլախանջները ՀՀ իրավական համակարգ ներդրելու հարցերը: Ատենախոսը գտնում է, որ այսօր կաշառակերության խնդիրը միջազգային նշանակություն է ձեռք բերել դադարելով լինել առանձին երկրների խնդիրը: Այդ իսկ պատճառով 20-րդ դարի 90-ական թվականներից բոլոր երկրները սկսեցին կառուցելային հակազդելու միջոցներ ձեռնարկել, որոնք կրում են համընդհանուր կամ տարածաշրջանային բնույթ: Կառուցելային խնդրի լուծման համար միավորվեցին Միավորված Ազգերի Կազմակերպությունը, Տնտեսական Համագործակցության և Ջարգացման Կազմակերպությունը, Եվրոպայի Խորհուրդը, Եվրոպական Միությունը, Ամերիկյան Պետությունների Կազմակերպությունը, ինչպես նաև՝ շատ այլ կազմակերպություններ: Հայաստանը նույնպես անմասն չմնաց և միացավ կառուցելային կանխարգելմանը միկրված միջազգային փաստաթղթերին և դրան համապատասխան սկսեց իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն: Նա,

համառոտ ներկայացնելով այն միջազգային իրավական ակտերը և կառույցները, որոնց ՀՀ միացել է, անդրադարձնում է որոշ փաստաթղթերի պահանջներ ՀՀ իրավական համակարգ ներդնելու հարցերին՝ մասնավորապես ուշադրությունը կենտրոնացնելով 1999 թ. Եվրոպայի հորինրի «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիային», 2003 թ. ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիային» և 2000 թ. ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիային»։ Հեղինակը նշում է, որ հիշյալ փաստաթղթերի հիման վրա ՀՀ-ում ոչ միայն ընդունվել են օրենքներ և այլ իրավական ակտեր, այլև դրանցում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ։ Ատենախոսի կարծիքով՝ կաշառակերության հետ կապված իրավախախտումների կանխարգելման քրեականացումը նախատեսող իրավական դաշտը միջազգային իրավական ակտերին համապատասխանեցնելու տեսանկյունից հիմնովին փոփոխվել է 2008 թվականին, երբ քրեական օրենսգրքում ավելացվեցին դրույթներ՝ այսպես կոչված հանրային ծառայողների կողմից կաշառակերության (քր.օր.-ի 311.1 և 312.1 հոդվածներ), ինչպես նաև ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելու (քր.օր.-ի 311.2 հոդված) վերաբերյալ։ Այժմ ՀՀ քր.օր.-ը պարունակում է ութ տարբեր հոդվածներ կաշառակերության և ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելու մասին։ Դրանք են՝ առևտրային կաշառքի մասին 200-րդ հոդվածը, սպորտի բնագավառում կաշառակերության մասին 201-րդ հոդվածը, պաշտոնատար անձանց կողմից կաշառք ստանալու մասին 311-րդ հոդվածը, հանրային ծառայողների կողմից կաշառք ստանալու մասին 311.1-րդ հոդվածը, ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելու մասին 311.2-րդ հոդվածը, պաշտոնատար անձանց կաշառք տալու մասին 312-րդ հոդվածը, հանրային ծառայողներին կաշառք տալու մասին 312.1-րդ հոդվածը և կաշառքի միջնորդության մասին 313-րդ հոդվածը։ Ըստ նրա՝ վերոնշյալ դրույթները ներառում են կոռուպցիոն վարքագծի դրսևորման ձևերի լայն շրջանակ։ Ատենախոսը եզրակացնում է, որ ներկա ժամանակաշրջանում ակնհայտ է ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրության համապատասխանությունը միջազգային իրավական ակտերի պահանջներին և նրանում առկա օրենսդրական ձևակերպումների սկզբունքային տարբերությունների բացակայությունը։

Ատենախոսը, առանձին-առանձին վերլուծելով միջազգային իրավական ակտերի պահանջները և ՀՀ օրենսդրության վերջին ժամանակների փոփոխություններն ու լրացումները, նշում է, որ միջազգային իրավական նորմերի իմպլեմենտացիայի շնորհիվ մախ՝ ընդլայնվեց կաշառքի առարկայի հասկացությունը, որը ներառեց ցանկացած ոչ իրավաչափ առավելությունը, երկրորդ՝ կաշառք տալու հանցագործության ավարտման պահը տեղափոխվեց ավելի վաղ փուլ։ Այն համարվում է որպես ավարտված հանցագործություն ոչ միայն կաշառքի կամ ոչ իրավաչափ առավելության փաստացի տրամադրմամբ, այլ նաև դրանց խոստման կամ առաջարկման փաստով։ Եվրոպայի խորհրդի կոնվենցիան առաջարկության հիմքով որպես ավարտված հանցագործություն է համարում նաև կաշառքի կամ ոչ իրավաչափ առավելության պահանջի կամ դրանք ստանալու խոստման և առաջարկի ընդունման փաստը, երրորդ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածից երկակի հանցավորության պահանջը վերացվեց, և այժմ անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության ՀՀ քր.օր.-ի 200-201-րդ, 311-313-րդ հոդվածներով նախատեսված հանցանքը որևէ այլ երկրում կատարելու համար՝ անկախ այդ երկրում այդ արարքները համարվում են քրեորեն պատժելի, թե ոչ, չորրորդ՝ ընդլայնվեց քրեական պատասխանատվության ենթակա սուբյեկտների և կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը հանրային և մասնավոր կաշառակերության համատեքստում, հինգերորդ՝ սահմանափակվեցին կաշառատուին հանցագործության մասին կամավոր հայտնելու դեպքում քրեական պատասխանատվությունից մեխանիկորեն ազատելու հնարավորությունները՝ կոնկրետ խրախուսական նորմում ժամանակային սահման նախատեսելով։ Այդուհանդերձ, հեղինակը եզրակացնում է, որ Հայաստանի համար կաշառակերության դեմ պայքարում միջազգային փորձի օգտագործումն առավելապես ցուցադրական նշանակություն ունի։ Ըստ ատենախոսի՝ ոչ թե պետք է մեխանիկորեն ներմուծել որևէ ինստիտուտ, որը նախատեսված է միջազգային իրավական ակտերում, այլ անհրաժեշտ է դրա հետ մեկտեղ հաշվի առնել ազգային մտածելակերպի և ավանդույթների

առանձնահատկությունները, ներպետական օրենսդրությունը, հարցի պատմությունը և այլն, մինչդեռ, ըստ նրա, ՀՀ-ում հարցը խորությամբ չի վերլուծվել, և այդ ուղղությամբ խորը ուսումնասիրություններ չեն կատարվել։

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում («Կաշառակերության կանխարգելման արտասահմանյան փորձը (իրավահամեմատական վերլուծություն)») բննարկման առարկա են դարձվել արտասահմանյան տարբեր երկրների օրենսդրության նորմերը կաշառակերության կանխարգելման կազմակերպման տեսանկյունից։ Ատենախոսը հիմնականում վերցրել է մի քանի խումբ երկրներ, որոնք այս կամ այն չափանիշով կարևորություն են ներկայացնում իրենց փորձի տեսանկյունից։ Այդ երկրներն են ԱՊՀ պետությունները, ասիական երկրները, եվրոպական այն երկրները, որոնցում կաշառակերությունը բավականին ցածր մակարդակի վրա է, և ԱՄՆ օրենսդրությունը։

Ատենախոսը կաշառակերության համար քրեական պատասխանատվության ոլորտում կատարած համեմատական-իրավական վերլուծության և այն ՀՀ օրենսդրության հետ համեմատելու արդյունքում եզրակացնում է, որ չնայած հանցագործությունների սուբյեկտների նկարագրության, հանցակազմների ձևակերպումների որոշակի տարբերություններին՝ կաշառակերության համար քրեական պատասխանատվության հիմնական պահերը նման են միմյանց։ Նրա կարծիքով՝ բոլոր պետություններում էլ առանց բացառության հատուկ կարևորություն են տրված կաշառակերության և կոռուպցիայի այլ տեսակների համար պատասխանատվություն սահմանող քրեաիրավական նորմերին, դրանց նկատմամբ ցուցաբերված է տարբերակված մոտեցում՝ հաշվի առնելով այդ հանցագործությունների բարձր հանրային վտանգավորությունը։ Այդուհանդերձ, նրա կարծիքով՝ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններում կաշառակերության հանցակազմների բոլոր ձևակերպումներն ունեն իրենց բերությունները. նրանք անորոշ են, հստակ չեն, հաճախ ձևակերպված են հասարակ թվարկումների տեսքով և, անխոս, ունեն իրենց ազգային առանձնահատկությունները։ Այդ իսկ պատճառով ատենախոսը գտնում է, որ չի կարելի առաջարկել և խորհուրդ տալ, որպեսզի նրանք ամբողջովին փոխառվեն հայրենական քրեական օրենսդրություն, սակայն կան առանձին պահեր, որոնք դրական են, և հարկ է դրանց անդրադարձնալ։ Ատենախոսի կարծիքով՝ այդ դրական հանգամանքները հետևյալն են՝ 1) Ռուսաստանի քր.օր.-ի կաշառքի միջնորդության հոդվածի բովանդակային տարբերությունը՝ հանցակազմի առավել հստակ ձևակերպման, որակյալ հատկանիշների օրինաչափության, խրախուսական նորմի առակայության և միջնորդության խոստման և առաջարկի համար քրեական պատասխանատվություն նախատեսելու հարցերը, 2) Բելառուսի քր.օր.-ի օրինակով՝ կաշառքի սուբյեկտը հատուկ մասից ընդհանուր մաս տեղափոխելու հարցը, 3) Բելառուսի, Ուկրաինայի օրինակով՝ կաշառք ստանալու համար իրավապահ և դատական մարմինների աշխատակիցների համար առավել խիստ պատասխանատվություն սահմանելը, 4) Էստոնիայի օրինակով՝ կաշառք ստացողին պատժից ազատելը, եթե նա գույք, գույքի նկատմամբ իրավունք, գույքային այլ առավելություն ստանալուց հետո՝ մինչև կաշառք տվող անձի օգտին որևէ գործողություն կամ անգործություն կատարելը, առաջինը ինքն է հայտնում կատարվածի մասին, 5) Լատվիայի օրինակով՝ կաշառքի յուրացման վերաբերյալ հանցակազմի նախատեսումը քր.օր.-ում, 6) Լատվիայի օրինակով՝ խրախուսական նորմի սահմանումը, որ հանցագործություն չի համարվում այն արարքը, երբ առաջին անգամ պաշտոնատար անձն առանց նախնական համաձայնության և նախկինում կատարած օրինական գործողությունների համար վերցնում է գույք կամ այլ գույքային օգուտ՝ որպես նվեր, որի արժեքը չի գերազանցում երկու ամսվա հաշվարկային ցուցանիշներին, և եթե այդ արարքը իր նվազ կարևորության պատճառով հետապնդվում է կարգապահական կամ վարչական կարգով, 7) եվրոպական երկրների քրեական օրենսդրությունների օրինակով՝ կաշառք-գնման և կաշառք-շնորհակալության համար նախատեսված քրեական պատասխանատվության անհատական մոտեցումը և սահմանազատումը, 8) Չինաստանի օրինակով՝ «պետական ծառայողին հարկադրաբար գույք տալը, որն անօրինական օգուտ ստանալու նպատակ չի հետապնդել, չի համարվում կաշառք տալ»։

Եզրակացությունում արտահայտվել են հետևյալ հիմնական եզրահանգումները և առաջարկությունները:

1. Կաշառակերությունը համարվում է կոռուպցիոն հանցագործությունների միջուկը, հավաքական հասկացություն, որն իրենում ներառում է երեք միմյանց հետ սերտորեն կապված ինքնուրույն հանցակազմեր՝ կաշառք ստանալը, կաշառք տալը և կաշառքի միջնորդությունը, քանի որ ունեն տարբեր օբյեկտիվ կողմեր, սուբյեկտներ և այլն:

2. ՀՀ քր.օր.-ում սահմանված կաշառքի առարկան ամբողջական է և փոփոխության կարիք չի զգում, այլ հարց է դատական պրակտիկայում «այլ առավելություն» հասկացության ճիշտ մեկնարանությունը:

3. Կաշառակերության դեմ պայքարի վերաբերյալ Հայաստանի քրեական օրենսդրության պատմական զարգացման վերլուծությամբ պարզվեց, որ կաշառակերությունը և դրան առնչվող հանցագործությունները հայ իրականությանը հայտնի են հին և միջնադարյան օրենսդրական հուշարձաններում: Ընդ որում, դրանք նախատեսում էին ինչպես կաշառք ստանալը, այնպես էլ տալը: Առանձին դեպքերում՝ մաս կաշառքի շորթումը: Այդուհանդերձ, կաշառակերության դեմ պայքարի վերաբերյալ Հայաստանի համար գերակա են եղել հատկապես Յարական Ռուսաստանի և Խորհրդային Միության քրեական օրենսդրության ազդեցությունը, և այն վերջինիս հետ զուգահեռ կատարելագործվել է աստիճանաբար:

4. «Կաշառք-շնորհակալության» հասարակական վտանգավորության աստիճանը ավելի ցածր է «կաշառք-զնույնի» հասարակական վտանգավորության աստիճանից: Պաշտոնատար անձի կողմից կաշառք-շնորհակալության ընդունումը, որպես կանոն, չի վկայում նրա ծախվածության մասին, քանի որ պաշտոնատար անձի կողմից կատարված գործողությունները հիմնված են եղել միայն նրա այն համոզմունքի վրա, որ դրանք անհրաժեշտ են, օրինական և նպատակահարմար և ոչ թե սպալվող ոչ իրավաչափ առավելության վրա: Բացի այդ, այս դեպքում պաշտոնատար անձը սովորաբար կատարում է իրավաչափ գործողություններ կամ անգործություն, որը նույնպես բնութագրում է այդպիսի կաշառքի հասարակական վտանգավորության աստիճանը: Փաստորեն սա իր բնույթով առավելապես կոռուպցիոն արարք է՝ անօրինական վարձատրության ստացում, բայց ոչ կաշառակերություն: Հետևաբար, անհրաժեշտ է նախատեսել առանձին հոդված, որը կսահմանի պատասխանատվություն կաշառք-շնորհակալության համար:

5. Գաղտնիք չէ, որ որոշակի դեպքերում պաշտոնատար անձը ստիպված է կաշառք վերցնել և ի օգուտ կաշառակառուի որևէ գործողություն և կատարել կամ չկատարել: Պաշտոնատար անձը, հայտնվելով մեծ իրավիճակում, այդուհանդերձ պետք է կատարի կամ չկատարի իրեն «հանձնարարված գործողությունը», քանի որ հակառակ դեպքում կարող է վտանգ սպառնալ իր և իր մերձավորների կյանքին կամ պաշտոնից զրկվելու: Նա ստիպված պետք է վերցնի կաշառքը. գործողությունների իմաստով նրան ընտրության հնարավորություն չի տրվում: Այս կապակցությամբ արդարացված կլինի կաշառակերի համար նույնպես սահմանել խրախուսական նորմ՝ հանցագործության մասին կամավոր հայտնելու առումով:

6. Կամավոր հայտնել հասկացության վերաբերյալ տարբերությամբ մտեցումներից առավելագույն խուսափելու, դատարանչական մարմինների կողմից բացթողումները և սխալները հնարավորին բացատրելու նպատակով՝ հարկավոր է քրեական օրենքում կատարել լրացում և որպես ծանոթագրություն՝ սահմանել կամավոր հայտնել հասկացության բնորոշումը:

7. ՀՀ քր.օր.-ի 312-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին ոչ ուշ, քան 3 օր հետո կանոնադրապես իրավապահ մարմիններին: Մինչդեռ, «իրավապահ մարմին» հասկացությունը որևէ իրավական ակտով ուղղակի սահմանված չէ: Միայն որոշակի իրավական ակտերի առանձին դրույթների վերլուծությունը այս կամ այն մարմնին անողղակի անվանում է իրավապահ: Այս կապակցությամբ անհրաժեշտ է օրենքում սահմանել իրավապահ մարմինների

հասկացությունը և դրանց ցանկը, ինչպես նաև՝ ընդլայնել այն հասցեատերերի շրջանակը, որոնց կարելի է դիմել հանցագործության մասին կամավոր հայտնելու առիթով:

8. Կաշառք ստանալու հասկացության մեջ համապատասխան ոչ իրավաչափ առավելություն «խոստանալը», «առաջարկելը» և «տրամադրելը» եզրույթների միակցումը օրենսդրության մեջ հաջողված չի կարելի համարել, քանի որ միևնույն արարքի առումով հանցագործության ավարտման պահը փոփոխվում է, որը նորմի տարակարծության և սխալ կիրառման պատճառ կարող է հանդիսանալ: Անհրաժեշտ է առաջին երկու եզրույթները տարանջատել երրորդից և հոդվածը լրացնել նոր մասով՝ կաշառք խոստանալը կամ առաջարկելը, իսկ 312-րդ հոդվածի 1-ին մասից հանել «խոստանալը կամ առաջարկելը» բառերը: Նույն մտեցմամբ կաշառակերության և ոչ իրավաչափ առավելություն տալ-ստանալու վերաբերյալ քր.օր.-ի հոդվածներում նպատակահարմար է նույնաբովանդակ լրացումներ և փոփոխություններ կատարել:

9. Քր.օր.-ում սահմանված կաշառակերությանը վերաբերող հոդվածներում նախատեսված «պահանջ» եզրույթի հետ կապված պաշտոնատար անձի գործողությունները անհրաժեշտ է տարանջատել երկու մասի: Առաջինը, երբ պահանջը կապված է ոչ իրավաչափ առավելություն տրամադրողի անօրինական շահերի հետ: Այս դեպքում այդ արարքը պետք է դիտել որպես կաշառք ստանալու որակյալ հատկանիշ: *Երկրորդը, երբ պահանջը վերաբերում է ոչ իրավաչափ առավելություն տվողի օրինական շահերին: Այս դեպքում անհրաժեշտ է առանձին հոդվածով քրեականացնել հիշյալ արարքը:* Այս հանցագործության դեպքում ոչ իրավաչափ առավելություն տրամադրողը ոչ թե արհեստականորեն պետք հանես զա որպես «կաշառատու»՝ հանցագործություն կատարող անձ, իսկ հետո քրեական օրենքի համապատասխան խրախուսական նորմի կիրառմամբ ազատվի պատասխանատվությունից, այլ ֆիզիկական անձ, որին հանցագործությամբ զույլբային կամ ոչ զույլբային վնաս է պատճառվել, այսինքն՝ դարձել է հանցագործության զոհ: Մրանով ինքնըստինքյան և իրավաչափորեն կրած վի կաշառքի շորթման դեպքերով ոչ իրավաչափ առավելություն տրամադրողին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրը այն առումով, որ տվյալ անձը հանդես կգա որպես տուժող: *Հարցի այսպիսի լուծման դեպքում 312-րդ հոդվածի 4-րդ մասից «եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ» բառերը անհրաժեշտ է հանել:*

10. Օրենսդիրը, կաշառքի յուրացումը դիտարկելով որպես չկարողախություն, ուշադրության չի արժանացրել այն հանգամանքը, որ արտաքինապես սեփականության դեմ ուղղված հանցագործության մեծամասնությամբ պաշտոնատար անձի կամ «կարծեցյալ միջնորդի» գործողությունները «իրավական դեֆեկտ» են պարունակում: ՀՀ քրեական օրենքի տրամաբանությունը հանգեցնում է նրան, որ խաբվածին պետք է միաժամանակ և տուժող համարել և հանցագործ (կաշառք տալու փորձ), որն անհնար է: «Կարծեցյալ» պաշտոնատար անձի կամ «կարծեցյալ միջնորդի» գործողությունները խարդախություն համարելը չի համապատասխանում հասարակական պարտախոսությունների քրեականացման պաշտպանության խնդիրներին և նպատակներին: Պետք է ընդունել, որ «կարծեցյալ» պաշտոնատար անձի և միջնորդի արարքները, վերջին հաշվով, վնասում են պետական ծառայության և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայության շահերին: Այդ իսկ պատճառով ՀՀ քր.օր.-ում անհրաժեշտ է լրացնել «Կաշառքի առարկայի յուրացումը» վերտառությամբ նոր հոդված իր հատկանիշներով: Հարցի մեծ լուծման պարագայում ՀՀ քր.օր.-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել:

11. Կաշառքի միջնորդության դիսպոզիցիայի ընկալումը և կիրառումը միանշանակ չեն և տարակարծության առիթ են տվել պրակտիկայում և հանգեցրել միջնորդի ու հանցակցի նույնացման: Տարբերեցումներից և տարամեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկված օրենսդրական փոփոխությունները՝

ա. առավել հստակեցրել են կաշառքի միջնորդության ֆիզիկական և ինտելեկտուալ աջակցության հատկանիշները,

բ. հանցակազմի որակյալ հատկանիշները սահմանվել են կաշառակերության որակյալ հատկանիշներին համահունչ,

գ. նախատեսվել է քրեական պատասխանատվություն կաշառքի միջնորդություն խոստանալու կամ առաջարկելու համար,

դ. կաշառքի միջնորդության մասին կամավոր հայտներ համարվել է որպես հիմք՝ միջնորդին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

12. Կաշառք տալու հանցագործության ավարտման պահը ավելի վաղ փուլ տեղափոխվելու հանգամանքը ինքնին խնդիրներ է առաջացնում կաշառքի պրովոկացիայի հանցակազմի կիրառման հետ կապված: Կաշառքի պրովոկացիա կազմող արարքները այժմ հանդիսանում են քրեորեն պատժելի և միանշանակ կարող են որակվել որպես հանցակցության փորձ՝ հանցագործության դրդման առումով: Բացի այդ, կաշառքի պրովոկացիայի գնահատողական հատկանիշները՝ «հանցագործության կատարման արհեստական ապացույցների ստեղծման նպատակ» և «առանց պաշտոնատար անձի համաձայնության», չափազանց կոմպլարացնեն կաշառք տալու հողվածի կիրառումը: Հաշվի առնելով, որ պրակտիկայում բավականին դժվար է ապացուցել այդպիսի համաձայնության գոյության կամ բացակայության հանգամանքը, մանավանդ նախապես չխոստացված կաշառքի դեպքում, կաշառատուն խիստ պատասխանատվությունից խուսափելու համար բռնվելու դեպքում կարող է պարզապես հայտարարել, որ կաշառքի պրովոկացիա է իրականացրել, որի հանգամանքը հերքելը կամ փաստելը լուրջ խնդիրներ կհարուցի, ուստի ՀՀ քր.օր-ի 350-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչելը կլուծի նշյալ մտահոգություններն ու խնդիրները:

13. Վերլուծելով ՀՀ կողմից վավերացված միջազգային-իրավական փաստաթղթերը՝ առենախոսն արժանազոր է, որ կոռուպցիայի և կաշառակերության դեմ քրեաիրավական պայքարում Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է միջազգային հանրության և հատկապես եվրոպական երկրների փորձին ինտեգրվելու ճանապարհը:

14. Կաշառակերության համար քրեական պատասխանատվության ոլորտում արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունների հետ կատարված համեմատական-իրավական վերլուծության և այն ՀՀ օրենսդրության հետ համեմատելու արդյունքում առենախոսը եզրակացնում է, որ, անկախ հանցագործությունների սուբյեկտների նկարագրության, հանցակազմների ձևակերպումների որոշակի տարբերություններին, կաշառակերության համար քրեական պատասխանատվության հիմնական պահերը նման են միմյանց: Եվ առանց բացառությունների բոլոր պետություններում էլ հատուկ կարևորություն են տրված կաշառակերության և կոռուպցիայի այլ տեսակների համար պատասխանատվություն սահմանող քրեաիրավական նորմերին, դրանց նկատմամբ ցուցաբերված է տարբերակված մոտեցում՝ հաշվի առնելով այդ հանցագործությունների բարձր հանրային վտանգավորությունը:

Առենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Сарсян Г.М., Цагикян С.Ш. Некоторые вопросы законодательного регулирования освобождения взяточдателя от уголовной ответственности // Правонарушения и юридическая ответственность: материалы Всероссийской научно-практической конференции. Тольятти, 3-4 декабря 2009 года /отв. ред. Р.Л. Хачатуров. – Тольятти: ТГУ, 2009. – էջեր 362-366:

2. Գ. Սարգսյան, Ա. Խորխոռունի, Ջ. Թադևոսյան, Ա. Մինասյան «Պաշտոնեական հանցագործությունների հիմնական տեսակների քրեաիրավական և քրեագիտական վերլուծություն» գիտագործնական ձեռնարկ. – Երևան, 2009. – 231 էջ:

3. Գ. Սարգսյան, Ա. Խորխոռունի, Տ. Պողոսյան, Մ. Գասպարյան, Հ. Ավետիսյան, Ա. Բասենցյան, Մ. Հարությունյան, Կ. Նաչաջյան, «Դասընթաց դպրոցականների համար «Կոռուպցիան և դրա դեմ տարվող պայքարը»՝ ձեռնարկ. – Երևան, 2009. – 139 էջ:

4. Գ. Սարգսյան, Ա. Խորխոռունի, Ա. Բասենցյան «Դասընթաց կոռուպցիայի վերաբերյալ», փուլ I, ձեռնարկ. – Երևան, 2009. – 199 էջ:

5. Գ. Սարգսյան, Ա. Ծաղիկյան, «Կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը». – Երևան, 2010. – 270 էջ:

6. Գ. Սարգսյան, Ջ. Թումանյան, Հ. Ավետիսյան, Լ. Ազատյան, Գ. Գևորգյան «Պայքար փողերի լվացման դեմ» գիտագործնական ձեռնարկ. – Երևան, 2010. – 414 էջ:

7. Գ. Սարգսյան «Կաշառքի շրթման համար քրեական պատասխանատվության առանձնահատկությունները»// Արդարադատություն. – 2012. – N 3 (18) . – էջեր 14-18:

8. Գ. Սարգսյան «Կաշառակերության վերաբերյալ օրենսդրության ծագման և զարգացման հիմնահարցերը Հայաստանի պատմության մեջ»// Դատական իշխանություն. – Երևան, 2012. – N 156. – էջեր 44-58:

Диссертация посвящена комплексному исследованию проблем освобождения от уголовной ответственности взяточдателя.

Целью исследования является всесторонний анализ проблем в области освобождения от уголовной ответственности взяточдателя, разработка концептуальных основ совершенствования уголовного законодательства Армении, а также разработка предложений и рекомендаций, направленных на повышение эффективности уголовно-правовых и других мер воздействия на взяточничество в целом.

Научная новизна диссертации, прежде всего, состоит в том, что в отличие от ранее проведенных исследований всесторонне, на концептуальном уровне изучены проблемы освобождения от уголовной ответственности взяточдателя. Впервые в Армении с учетом интеграции в международное сообщество, с позиций системного подхода сделана попытка целостного обобщения уголовно-правовых аспектов обозначенной проблемы. В результате проведения всестороннего и глубокого исследования проблемы, предлагаются теоретические и практические решения в контексте реальных возможностей их материализации в современных условиях.

Диссертация состоит из введения, трех глав, объединяющих семь параграфов, заключения, списка использованной литературы и приложения.

Во введении обосновывается актуальность темы, представляются ее цель и задачи, научная разработанность, теоретическая, нормативная, эмпирическая и методологическая основа, определяется теоретическое и практическое значение, излагаются основные положения, выносимые на защиту, а также представляются результаты апробации и структура работы.

В первой главе автор анализирует социально-правовую характеристику взяточничества, сделав следующие основные выводы:

1. Взятничество является ядром преступлений коррупционной направленности, суммарным понятием, включающим три взаимосвязанных преступления: 1) дача взятки; 2) получение взятки и 3) посредничество во взяточничестве, так как таковые различаются по объективной стороне и по субъектам состава преступлений;

2. Предусмотренный в УК РА предмет взятки определен исчерпывающим образом и не нуждается в уточнении. Другой вопрос, что в судебной практике следует правильно толковать понятие «иное преимущество».

3. Исторический очерк уголовного законодательства Армении, относительно борьбы со взяточничеством, показал, что:

- ✓ взяточничество и связанные с ним иные преступления были предусмотрены ещё в древних и средневековых законодательных памятниках Армении.
- ✓ для развития законодательства Армении, относительно борьбы со взяточничеством, приоритет имело законодательство Российской Империи и Советского Союза.

Во второй главе автор детально анализирует основания освобождения взяточдателя от уголовной ответственности, приходя к следующим основным выводам:

1. «Взятка-благодарность» имеет более низкую общественную опасность, чем «взятка-подкуп». Поэтому, необходимо предусмотреть отдельную статью, устанавливающую ответственность за «взятку-благодарность».

2. Имея в виду особенности нашей действительности, предлагается установить поощрительную норму также для взяточполучателя, в случае добровольного сообщения о преступлении.

3. Во избежание различных толкований понятия «добровольное сообщение», а также для исключения ошибок со стороны следственных и судебных органов, необходимо внести дополнение в уголовный закон и в качестве примечания предусмотреть определение понятия «добровольное сообщение».

4. Автор считает необходимым дать законодательное определение понятия «правоохранительный орган», перечень таких органов, а также расширить диапазон тех адресатов, которым следует обратиться с добровольным сообщением о преступлении.

5. Диссертант считает неуспешным объединение в законодательстве понятий «обещание», «предложение» и «предоставление» неправомерного преимущества, так как при подобном правовом регулировании изменяется момент окончания того же деяния, что может привести к неправильному толкованию и применению нормы. Необходимо разграничить первые два понятия от третьего и дополнить статью новой частью – обещание или предложение взятки, исключив из диспозиции ч. 1 ст. 312 УК РА слова «обещание или предложение».

6. По убеждению автора, необходимо разделить на две части действия должностного лица, связанные с понятием «требование», предусмотренное в статьях УК РА, относящиеся взяточничеству. Если требование связано с незаконным интересом лица, предоставляющего неправомерное преимущество, необходимо рассматривать деяние в качестве квалифицированного признака получения взятки. Если же требование относится законным интересам лица, предоставляющего неправомерное преимущество, необходимо криминализировать данное деяние в отдельной статье УК. В этом случае лицо, предоставляющее неправомерное преимущество, выступает не в качестве взяточдателя (лица, совершившего преступление), а в качестве потерпевшего, т. е. физического лица, которому преступлением непосредственно причинен вред.

7. Автор предлагает дополнить УК РА новой статьей, под названием «Присвоение предмета взятки», представляя ее редакцию.

8. Диссертант обосновывает необходимость изменения статьи о посредничестве во взяточничестве, предлагая новую редакцию статьи.

9. Автор предлагает признать утратившим силу ст. 350 УК РА, предусматривающую ответственность за провокацию взятки или коммерческого подкупа.

В третьей главе, анализируя международно-правовые документы, ратифицированные РА, диссертант констатирует, что в сфере борьбы с коррупцией и взяточничеством Армения выбрала путь заимствования опыта мирового сообщества и особенно европейских стран.

На основании сравнительно-правового анализа в сфере уголовной ответственности за взяточничество автор делает вывод о том, что, несмотря на различий в характеристике субъектов и формулировках составов преступлений, основные черты уголовной ответственности за взяточничество в законодательстве зарубежных стран имеют сходства. В

законодательстве всех без исключения стран сделан акцент на уголовно-правовые средства борьбы со взяточничеством и с другими проявлениями коррупции, выявлены в отношении таких деяний дифференцированные подходы, имея в виду высокую общественную опасность таких преступлений.

В заключении диссертации изложены выводы и предложения, отражающие основные положения и результаты исследования.

THE ISSUES OF RELEASING THE BRIBE GIVER FROM THE CRIMINAL LIABILITY

SUMMARY

The dissertation is devoted to the comprehensive study of the issues of releasing the bribe giver from the criminal liability.

The aim of the research is raising the issues of releasing the bribe giver from the criminal liability and processing the conceptual foundations devoted to the improvement of RA criminal legislation, as well as presenting suggestions aimed at increasing the productiveness of the criminal, legal and other means of bribery counteraction in general.

The scientific novelty of this dissertation is that for the first time in Armenia an attempt was made to coordinate the criminal and legal aspects of the issue discussed, taking into consideration the fact of international community integration. As a result of a comprehensive and in-depth survey the theoretical and practical solutions related to the release of the bribe giver from the criminal liability have been suggested in the context of their actual implementation opportunities in current conditions.

The dissertation consists of introduction, three chapters which combine seven paragraphs, conclusion, bibliography and appendix.

The modernity of theme is substantiated in the introduction, its workmanship category, theoretical, methodological, normative and experience grounds are presented, the goals and problems are formulated, the theoretical and practical importance of research is determined, the basic provisions submitted to defense are discoursed, the results of the test and the work structure are comprised.

In the introduction the author analyzes the concept of bribery and its characteristic features coming to the following conclusions:

1. The bribery is considered as the core of the corruption crimes, corporate concept, which in itself consists of three closely related separate corpus delicti-taking a bribe, giving a bribe and bribe mediation.

2. The object of bribery which is defined in the RA Criminal Code is complete and does not need a change; another issue is the proper interpretation of "other advantage" in the court practice.

3. The analyses of historical development of Armenia's criminal legislation on the fight against bribery proves that:

- ✓ The bribery and crimes related to it are known to the Armenian reality in the ancient and medieval legislative monuments.
- ✓ The impact of especially the Tsarist Russia's and the Soviet Union's criminal legislation played a prior role for Armenia for the fight against bribery and it has simultaneously refined with the latter in a gradual manner.

In the second chapter the author thoroughly analyses the grounds for releasing the bribe giver from criminal liability, as a result of which makes the following findings:

1. The level of public danger of the "Bribe-thanks" is lower than the level of public danger of the "Bribe-purchase". Therefore the author suggests foreseeing a separate article, which will define liability for the "bribe-thanks", and presents the relevant wording of the article.

2. Taking into consideration the features of our reality, the author suggests foreseeing encouraging norm for the bribe taker either, in respect of voluntary reporting about the crime, presenting relevant formulation.

3. For the aim of excluding the omissions and errors of court and investigative bodies as much as possible, maximally avoiding various approaches on the concept of voluntary reporting, the author suggests making an amendment to the criminal law and giving a characteristic to the "voluntary reporting" concept as a footnote.

4. The author suggests defining the concept of the law enforcement bodies in a legislative level and presenting their list, as well as expanding the scope of those recipients, who can be applied to

for the occasion of voluntary reporting about the crime, for example to the public by means of mass media.

5. In the author's opinion the concretion of the terms "promising", "offering" and "providing" of the relevant, not legitimate advantage in the concept of bribe taking in the legislation cannot be considered as successful, because the moment of the crime completion changes in terms of the same act, which can cause a gap and incorrect use of the norm. Therefore it is considered as vital to separate the first two terms from the second and amend the article with the new part, the content of which is presented.

6. The author thinks that it is necessary to separate into two parts the actions of the official related to the term "requirement" which is envisaged in the articles on bribery in the criminal code. The first part-when the requirement is related to the illegal interests of one who provides not legitimate advantage, in case of which that act needs to be viewed as aggravating circumstance of bribe taking. The second part-when the requirement is related to the legal interests of one who provides not legitimate advantage, In this case it is necessary to criminalize the mentioned act by the separate article.

7. The author suggests amending the RA Criminal Code with the "Appropriation of the bribery subject" separate corpus delicti, presenting its content.

8. The author substantiates the necessity of changing the article on bribery mediation and suggests a new wording of the article.

9. The author suggests repealing Article 350 of the RA Criminal Code, i.e. the provocation of bribe or commercial bribe, giving relevant justifications.

In the third chapter, analyzing the international-legal documents ratified by the RA, the author has come to the conclusion that the RA has adopted the way of integrating the practice of international and especially European countries in the criminal and legal fight against corruption and bribery.

As a result of comparative-legal analyzes of the criminal liability for the bribery and comparing the latter with the RA legislation, the author concludes that despite some differences of the crimes subjects' description, formulation of the corpus delicti, the key moments of criminal liability formulation for the bribery are similar to each other. In his opinion the criminal and legal norms defining criminal liability for the bribery and other forms of corruption are given special importance in all states without any exception, these norms are differentially approached, taking into consideration the high public danger of that crimes. Nevertheless in the author's opinion all the formulations of bribery corpus delicti in Criminal Laws of foreign countries have their shortcomings, i.e. they are indefinite, incorrect, often formulated as simple numeration and, of course, have their national peculiarities. For this reason the author considers it inadmissible to suggest and advise incorporating them into the domestic Criminal Law, though there are some positive aspects to touch upon. In his work the author definitely suggests which practice related to the research issues of criminal legislation of which country is exemplary.

In the conclusion the author presents the main conclusions which were made in the result of the research.



05.02.2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0506981

0105 50 30